



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

29.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/50

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Վ. Վահանյանի, Կ.
Խաչունցի
«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)
կողմից 07.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 07.04.2022թ.-ին:

11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/50 համարի ծածկագիրը:

15.04.2022թ.-ին և 29.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2022թ.-ին:

2. «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեղէքսպերտ» ՍՊԸ-ն 07.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ պաշտպանության նախարարություն»-ը բժշկական պարագաների գնման նպատակով հրապարակել է <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

<<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից մասնավորապես դրվել են հետևյալ պահանջները

<<1.3 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կարարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2.4 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:»>:

ա. Վերոնշյալ պահանջներից 2.1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին:

բ. Վերոնշյալ պահանջներից 2.4 կետում նշված պահանջը խտրական է, քանի որ արտադրողի ներկայացուցիչը առավելություն է ստանում վերավաճառող ընկերությունից ապրանք ձեռք բերած ընկերության նկատմամբ, մասնավորապես պատվիրատուն պահանջում է, որ ապրանքի պիտանիության ժամկետի վերաբերյալ փաստաթուղթը տրված լինի հենց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից, այսինքն վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը, որն օրինակ ունի ընդհուպ 2024, 2025 կամ 2025թ. պիտանիության ժամկետ, անընդունելի է պատվիրատուի համար:

գ. 2022թ. ապրիլի 3-ին հարցում է ուղարկվել պատվիրատուին, որին ի պատասխան ապրիլի 5-ին ստացվել են հետևյալ պարզաբանումները:

<<1. Հարցման 1-ին կետի առնչությամբ հայտնում եմ, որ սույն ընթացակարգի հրավերով մատակարարվող ապրանքների վրա արագ արձագանքման կոդի (QR կոդ) պարտադիր առկայության վերաբերյալ պահանջ սահմանված չէ:

2-րդ կետի առնչությամբ հայտնում եմ, որ իրավասու մարմին է համարվում այն մարմինը, որը օժտված է տվյալ փաստաթուղթը կազմելու և տրամադրելու իրավունքով: Օրինակ՝ փորձարկման արձանագրություն իրավասու է տրամադրել համապատասխան փորձաքննություն իրականացնող մարմինը, իսկ համապատասխանության հավաստագիր իրասվասու է տրամադրել հավաստագրող մարմինը: Վերավաճառք իրականացնող

կազմակերպությունը կարող է դիտարկվել որպես իրավասու մարմին, եթե այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտադրողի կողմից ստացել է իր անունից գործելու և սահմանված պարտավորությունների շրջանակներում խնդիրները լուծելու գրավոր թույլտվություն և գործում է ստացված իրավասությունների շրջանակներում:

3-րդ կետի առնչությամբ հայտնում են, որ 2.1 կետում նշված «կամ ավյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից» պահանջում «այլ փաստաթուղթը» նշանակում է, որ հանձնման պահին կարող է ներկայացվել «Հրավերի» 2.1 կետում թվարկված փաստաթղթերի փոխարեն ցանկացած այլ փաստաթուղթ, որը կհավաստի մատակարարված ապրանքի խմբաքանակի որակը և տրված կլինի իրավասու մարմնի կողմից: Արտադրողի կողմից տրված հայտարարագիրը կարող է համարվել այդպիսի փաստաթուղթ եթե վերաբերելի լինի մատակարարված խմբաքանակին:

4-րդ կետի առնչությամբ հայտնում են, որ նախկինում իրականացված գնման ընթացակարգերի շրջանակներում՝ բացառությամբ ՀՀ-ում գործող արտադրողների կողմից տրամադրված փաստաթղթերի, ինչպես նաև չգրանցված դեղերի վերաբերյալ ՀՀ ԱՆ ՀՀ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից տրված տեղեկանքների և ՀՀ ԱՆ-ի հրամանով հաստատված ախտահանիչ նյութերի օգտագործման ձեռնարկների, ՀՀ-ում գործող որևէ մարմնի կողմից տրամադրված այլ փաստաթուղթ մատակարարների կողմից չի ներկայացվել, ուստի իրավասությունների գնահատման կարիք չի առաջացել և այդ մարմինների վերաբերյալ ավյալների ՀՀ պաշտպանության նախարարությունը չի տիրապետում:

4.1 կետի առնչությամբ հայտնում են, որ եթե ՀՀ-ում համապատասխանության գնահատման ծառայություններ մատուցող մարմինը իրավասու է տրամադրել խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ, ապա այդ փաստաթուղթն ընդունելի է:

5-րդ կետի առնչությամբ հայտնում են, որ ընդունող հանձնաժողովի կողմից՝ փաստաթղթերը տրամադրած մարմնի կողմից ներկայացված փաստաթուղթը տրամադրելու իրավասությունները, գնահատվելու են գործող իրավական ակտերի հիման վրա:»:

դ. Չափաբաժիններ 1-ից 14-ի տեխնիկական բնութագրերում առկա է անհրազործելի պահանջ, մասնավորապես <<Ստերիլ գործարանային փաթեթավորումով>> պահանջը:

ե.18, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59
չափաբաժինների տեխնիկական բնութագրերին համապատասխանում է մեկ
արտադրող:

զ. Հրավերի տեքստը ռուսերեն լեզվով հրապարակված չէ:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

ա. 2.1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ
ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական
ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք
մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի
պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի
պաշտոնական ներկայացուցչին, ուստի խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի
Հոդված 13-ի 2 կետի 2 ենթակետի պահանջները.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝ ...2) չպետք է հանգեցնեն գնումների
գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.»:

Պատվիրատուն այս պահանջը դրել է մեկ նպատակով: Պատվիրատուն ցանկանում
է ստեղծել փակ շղթա, որտեղ անհնար կլինի մուտք գործել վերավաճառող
ընկերությունների ապրանքով: Անշուշտ պատվիրատուն բերելու է մի շարք
պատճառաբանություններ, ցույց է տալու իր «մտահոգությունը» մատակարարված
ապրանքի վերաբերյալ և ձգտելու է ամեն կերպ ցույց տալ, որ հենց տվյալ խմբաքանակի
համար տրված փաստաթղթերն են հանդիսանում որակի միակ երաշխիքը, հենց այդ
փաստաթուղթը եղավ, ուրեմն որակի և անվտանգության հարցը փակված է: Իրականում,
ինչպես արդեն նշեցինք, պատվիրատուն ձգտում է այնպես անել, որ առանց արտադրողի
կամ նրա պաշտոնական ներկայացուցչի իմացության և թույլտվության ապրանք չներմուծվի
Հայաստան: Այստեղ հարց է ծագում, թե ինչը կարող է խանգարել վերավաճառող
ընկերությանը ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանակի փաստաթղթերը
արտադրողից: Պատասխանը հետևյալն է: Միջազգային ճանաչում ունեցող արտադրողները
աշխատում են դիստրիբյուտորական ցանցով, այսինքն ամեն երկրում կամ
տարածաշրջանում նշանակում են դիստրիբյուտորներ՝ պաշտոնական ներկայացուցիչներ:
Օրինակ եթե ՀՀ-ում գտնվող որևէ առևտրային ընկերություն որոշի նամակ գրել
գործարանին՝ ցանկանալով ձեռք բերել ապրանք, ապա գործարանը նամակը
վերահասցեավորում է տվյալ երկրում նշանակված դիստրիբյուտորին: Եթե ՀՀ-ում գտնվող
առևտրային ընկերությունը նամակ գրի այլ երկրի դիստրիբյուտորին, ապա վերջինս չի

վաճառի ապրանք ՀՀ-ում գտնվող ընկերությանը, քանի որ արտադրողի քաղաքականությունն այնպիսին է, որ դիստրիբյուտորները պետք է մուտք չգործեն այլ երկրների դիստրիբյուտորների շուկա: Այլ կերպ ասած, շուկան բաժանված է տարածաշրջանների և ամեն դիստրիբյուտոր գործում է իրեն կցված երկրում կամ տարածաշրջանում: Երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը ցանկանա ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանակի փաստաթուղթը, ապա ստիպված է նամակ գրել արտադրողին, քանի որ այդ փաստաթուղթը կարող է տալ միայն արտադրողը, որն էլ բնականաբար չի տրամադրի այդ փաստաթուղթը, քանի որ տվյալ երկրում արդեն ունի դիստրիբյուտոր և գործող դիստրիբյուտորի տնտեսական շահերին վնասող քայլ չի կատարի: Ստացվում է մի իրավիճակ, երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը եթե նույնիսկ զգալիորեն մատչելի գնով ապրանք ձեռք բերի վերավաճառող ընկերությունից և փորձի մատակարարել պաշտպանության նախարարությանը, ապա վերջինս չի ընդունելու ապրանքը, քանի որ այնպիսի փաստաթուղթ է պահանջում, որը գտնվում է միայն արտադրողի մոտ: Տվյալ իրավիճակից օգտվում է արտադրողի պաշտոնական ներկայացուցիչը, քանի որ առանց որևէ մրցակցի, բնականաբար ուռճացված գնով ապրանք է վաճառում պատվիրատուին: Այսինքն պատվիրատուն նախընտրում է ուռճացված գնով ապրանք ձեռք բերել պաշտոնական ներկայացուցչից, քան զգալիորեն մատչելի գնով այլ ընկերությունից, որը նույն արտադրողի նույն ապրանքը ձեռք է բերել վերավաճառողից: Պատվիրատուի այսպիսի պահանջների դեպքում բացառվում է մրցակցությունը, քանի որ արդեն հենց սկզբից նախապատվությունը տրվում է գործարանի պաշտոնական ներկայացուցչին:

բ. Մեր ընկերությունը դիցուք հնարավորություն ունի մատակարարել սույն ընթացակարգի թիվ 18 չափաբաժնում նշված ապրանքը, սակայն պատվիրատուի կողմից սահմանվել է այնպիսի պահանջ, որ բացի արտադրողի պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող ընկերությունից, որևէ այլ ընկերություն չի կարող մատակարարել այդ ապրանքը, մասնավորապես այդ չափաբաժնում նշված ապրանքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ թե գործարանային սրվարաթղթե փուփի, թե սփերիկ անհատական փաթեթավորման վրա առկա է միայն պիտանիության ժամկետի ավարտը, այսինքն ապրանքի արտադրության ժամկետը չի մակնշված, ընդ որում գործարանային սրվարաթղթե փուփում գտնվող ձեռնարկում ևս բացակայում են տվյալներ այդ խմբաքանակի պիտանիության ժամկետների վերաբերյալ: Նման իրավիճակի համար պատվիրատուն ունի <<լուծում>>, որը շարադրված է Ծանոթություն բաժնի 2.3 կետում:

<<2.3 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:>>:

Փաստացի կոնկրետ այս դեպքում պատվիրատուն որպես լծակ է կիրառում այս պահանջը, որպեսզի պոտենցիալ մատակարարներին ուղղորդի դեպի արտադրող կամ նրա ներկայացուցիչ, որը տվյալ ընթացակարգով հայտ ներկայացնող ընկերությունն է լինելու, այսինքն մեր մրցակիցը և հետևաբար տնտեսական շահերի բախմամբ պայմանավորված որևէ տեղեկություն բնականաբար չի տրամադրի: Նման իրավիճակից ելք գտնելու փոխարեն, օրինակ կոնկրետ այդպիսի չափաբաժինների համար պիտանիության ժամկետի վերաբերյալ այլ ընդունելի պահանջ սահմանելու փոխարեն, պատվիրատուն շարունակում է նույն գործելաոճը, անհնար դարձնելով որևէ այլ ընկերության մասնակցությունը, մինչդեռ ինչպես արդեն նշել ենք վերևում, մեր ընկերությունը հնարավորություն ունի մատակարարել ընդհուպ 2024, 2025 և 2026թ. պիտանիության ժամկետով ապրանք, սակայն առկա խտրական պահանջների պատճառով չի կարող դա անել:

գ. Ուղարկված հարցմանն ի պատասխան ՊՆ կողմից տրված պարզաբանման մեջ անորոշ է, թե կոնկրետ որ իրավական ակտերի հիման վրա է ընդունող հանձնաժողովը գնահատելու <<փաստաթղթերը տրամադրած մարմնի կողմից ներկայացված փաստաթուղթը տրամադրելու իրավասությունները>>, այսինքն պոտենցիալ մատակարարների համար անհայտ է, թե կոնկրետ որ նորմատիվ իրավական ակտերով է շարժվելու ընդունող հանձնաժողովը: Սա կարևոր հանգամանք է, քանի որ ՊՆ ընդունող հանձնաժողովի անդամները կարող են յուրովի կամայական մեկնաբանություն տալ ինչ-որ նորմատիվ իրավական ակտի՝ պատճառաբանելով որ օրինակ այդ լաբորատորիան կամ հավաստագրող մարմինը իրավունք չունեն տրամադրելու այդ փաստաթուղթը, օրինակ մատակարարի ներկայացրած <<խմբաքանակի որակը հավաստող>> փաստաթուղթը տրամադրող մարմնի իրավասությունները անհիմն կերպով կասկածի տակ առնեն:

դ. Չափաբաժիններ 1-ից 14-ի տեխնիկական բնութագրերում առկա է անիրագործելի պահանջ, մասնավորապես <<Ստերիլ գործարանային փաթեթավորումով>> պահանջը: Որևէ մատակարար չի կարող մատակարարել այդ տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք:

ե.18, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59
չափաբաժինների տեխնիկական բնութագրերին բավարարում է միայն մեկ արտադրող,
ինչը հակասում է ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ
հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին

<<22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ
դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝
բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով
կատարելու դեպքերի:>>:

գ.<<Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝
«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի
N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի
(այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ
հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական
ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ պաշտպանության
նախարարության (այսուհետ՝ պարվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին
մասնակցելու մրտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու
ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված
մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու
ընթացակարգի հայտը պարտաստելիս: Հայտեր կարող են ներկայացնել համակարգում
գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ,
կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:>> մեջբերման
ավարտ:

Համաձայն 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 11 կետի՝ 34 կետի 1 և 2
ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախադրակավորման
մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում

հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը>>:

Այս պահանջին չհամապատասխանող հրավեր հրապարակելու դեպքում փաստացի սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց, օրինակ ոչ ռեզիդենտ կամ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված կազմակերպությունների մասնակցությունը ընթացակարգին:

Փաստացի պաշտպանության նախարարությունը միայն հրավերի հայտարարությունն է հրապարակել նաև ռուսերեն լեզվով, իսկ հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը, հավելվածները հրապարակված են միայն հայերեն լեզվով:

Հարկ ենք համարում նաև նշել, որ նույնարժեքային բազմաթիվ բողոքներ են քննվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից, ուստի կմեջբերենք ընդամենը երկու այդպիսի բողոքարկման ընթացակարգ՝ ԳԲԲԱ-ՆԳ-2020/13, ԳԲԲԱ-ԼՕ-2020/28, որոնք երկուսն էլ բավարարվել են:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Ընկերությունը, 14.04.2022թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«14.04.2022թ.-ին Ձեր աշխատակազմի կողմից ստացել ենք ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուսյանի գրությունը և ՀՀ ՁՈԻ ռազմաբժշկական վարչության պետի ՊԺԿ Գ. Փաշիկյանի տեղեկանքը:

Ներկայացնում ենք մեր դիրքորոշումը այդ փաստաթղթերի վերաբերյալ՝

1) Գրության երկրորդ էջում պատվիրատուն նշում է, որ մեջբերում եմ «հրավերները ռուսերենով չհրապարակելու վերաբերյալ «Մեդիքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից բողոքների լրացումներում բարձրացված հարցերը ամենևին չեն սահմանափակում նշված ընթացակարգերին իրենց մասնակցության իրավունքը, քանի որ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և որևէ խնդիր չունեն հայերեն լեզվի իմացության հետ» մեջբերման ավարտ:

Մեր խորին համոզմամբ, պաշտպանության նախարարությունը չունի ոչ կարողություն, և ոչ էլ իրավասություն կամ լիազորություն գնահատելու մեր ընկերության իրավունքի սահմանափակումները, ուստի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կատարված դատողությունները անտրամաբանական են, իսկ տրված գնահատականները ամբողջությամբ անհիմն:

Եթե օրինակ Մեդէսպերտ ՍՊԸ-ն ցանկանա մասնակցել իր կողմից բողոքարկված ընթացակարգերին ԵԱՏՄ անդամ որևէ այլ երկրներից մեկի ընկերության հետ կոնսորցիումի միջոցով ապա այդ դեպքում հայերեն լեզվի իմացության մեր գերազանց մակարդակը ոչ մի նշանակություն չի ունենալու, իսկ մեր կողմից կատարված ռուսերեն լեզվով թարգմանություններում հնարավոր է լինեն տերմինների, բառերի, արտահայտությունների, ձևակերպումների այնպիսի թարգմանություններ, որոնք կարող են չընդունվել և մերժվել պաշտպանության նախարարության համապատասխան մասնագետների կողմից համապատասխան հետևանքներով, որոնց ականատեսը եղել ենք և սցենարին ծանոթ ենք:

2) Հաջորդ նախադասությամբ պատվիրատուն նշում է, որ մեջբերում են «Վերոհիշյալ գնման ընթացակարգերի հայտարարությունները հրապարակվել են նաև ռուսերեն, որոնք տալիս են ընդհանուր պարկերացումներ գնման առարկաների վերաբերյալ» մեջբերման ավարտ: Այստեղ առանցքային բառակապակցությունը «ընդհանուր պարկերացումներ»-ն է: Այս բառակապակցությունով պաշտպանության նախարարությունը փորձում է փակվորություն ստեղծել թե ընդհանուր պարկերացումները բավարար են հրապարակված ընթացակարգին մասնակցելու համար, մինչդեռ մեր ընկերության ներկայացուցիչն անձամբ է ականատես եղել, թե ինչպես են որպես ՀՀ պաշտպանության նախարարության ընդունող հանձնաժողովի անդամներ ներկայացած որոշ պաշտոնյաներ անհիմն պահանջներ ներկայացրել մատակարարին, մանրամասնությամբ ստուգել պայմանագրի յուրաքանչյուր բառն ու կերպարական նշանները, շաղկապների նշանակության վերաբերյալ յուրովի մեկնաբանականներ կատարել և այլն, ու հիմա այդ նույն մարդիկ ասում են, որ մասնակիցը կարող է առաջնորդվել «ընդհանուր պարկերացումներով >>:

3) Պատվիրատուն նշել է, որ Մեդէսպերտ ՍՊԸ նպատակը, մեջբերում են «ամեն գնով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելն է» մեջբերման ավարտ: Նախ, Մեդէսպերտ ՍՊԸ-ն չունի լիազորություն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Հավանաբար պատվիրատուներն նկատել են ունեցել Մեդիաքայերի ՍՊԸ բողոքների հիման վրա գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումները բողոքարկվող ընթացակարգերը չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

Այս անհետք մեղադրանքին ի պատասխան հայտնում ենք, որ Մեդիաքայերի ՍՊԸ-ն չի բողոքարկել ՀՀ ՊՆ բոլոր ընթացակարգերը, մասնավորապես 2022թ. հունվարի 1-ից առ այսօր ՀՀ ՊՆ-ն հրապարակել է բազմաթիվ ընթացակարգեր, որոնցից Մեդիաքայերի ՍՊԸ-ն բողոքարկել է մի քանիսը միայն: Սա հեշտությամբ կարելի է ստուգել gnumner.am կայքի միջոցով և համոզվել դրանում:

4) ՀՀ պաշտպանության նախարարությունը իր կողմից հրապարակվող ընթացակարգերը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու և հայտարարելու փոխարեն, զբաղված է պոպուլյար մասնակից ընկերություններին փնտվելով և մեղադրելով, այսինքն սեփական շարքերում պատասխանատու գանելու փոխարեն մեղքը փորձում է բարդել ընթացակարգին մասնակցել ցանկացող, բայց այդ հնարավորությունից զրկված ընկերությունների վրա, այսինքն ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը չի կարողանում կամ դիտարկել չի ցանկանում կազմակերպել ընթացակարգերը գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն <<մեղավորը բողոքող ընկերություններն են>>:

5) Գրության վերջում պաշտպանության նախարարությունը փորձել է հիմնավորել հրավերների ռուսերենով չհրապարակելը՝ նշելով մեծածավալ գնումները, գնման առարկաների բազմազանությունը, դրանց մեծ մասի տեխնիկական բնութագրերի թարգմանման համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները, առկա աշխատանքային ռեսուրսով պարզաճ թարգմանություն կազմակերպելու անհնարինությունը:

Տրամաբանական հարց է ծագում, եթե ՀՀ ՊՆ-ն՝ ըստ իր գրության, չունի տեխնիկական բնութագրերի թարգմանության համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները և անհնար է համարում իր աշխատանքային ռեսուրսով պարզաճ թարգմանություն կազմակերպելը, ապա էլ ինչպես խոսենք մասնավոր ընկերությունների մասին, որոնք շատ ավելի համեստ մարդկային ռեսուրսներ և նյութական միջոցներ ունեն:

Բացի այդ, նույն գրության սկզբնամասում ՀՀ ՊՆ-ն համոզմունք էր հայտնում, որ փարբեր ընկերություններ կարող են մասնակցել, քանի որ ընթացակարգի հայտարարությունը նաև ռուսերենով է հրապարակված և դա փախ է ընդհանուր

պատկերացումներ գնման առարկաների վերաբերյալ», իսկ արդեն գրության վերջում խոստովանում է, որ խիստ մասնագիտական կարողություններ և աշխատանքային ռեսուրսներ են պետք:

6) խիստ անտրամաբանական է ՀՀ ՊՆ «հիմնավորում»-ը նաև այն իմաստով, որ ՀՀ-ում փաստացի առկա են բազմաթիվ այլ պատվիրատուներ, ովքեր իրենց մի քանի փասնյակ չափաբաժիններով ընթացակարգերը թարգմանում են նաև ռուսերեն:

Այդպիսի պատվիրատուներ են Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ-ն, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և բազմաթիվ այլ պատվիրատուներ, ուստի ծայրահեղ անհրաժեշտ է պարտադրել ՀՀ ՊՆ-ին գործել «Գնումների մասին» ՀՀ օրենքին և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին համապատասխան, ինչպես մյուս օրինակելի պատվիրատուները:

Սրացվում է, որ ՀՀ ՊՆ-ն համարում է, որ կարող է ոտնահարել մասնակից ընկերությունների շահերը, դիտավորյալ կամ պատահաբար խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները ու վերջում էլ մեղքը բարդել բողոքող ընկերությունների վրա, ինչպես նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վրա փորձել ճնշում գործադրել հիշեցնելով պետական շահի և ՀՀ ԶՈՒ անվտանգության մասին: Հարց է ծագում, ընթացակարգերը հայտարարելիս ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պաշտոնյաները հիշում էին պետական շահի և ՀՀ ԶՈՒ անվտանգության մասին, թե ուղղակի շահարկում են դա այն ժամանակ, երբ սպառել են ՀՀ գնումների օրենսդրության դաշտում իրենց փաստարկները:

Սա բացարձակ անընդունելի մոտեցում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, քանի որ օրենքի առաջ պետք է հավասար լինեն բոլոր պատվիրատուները անխտիր: Չի կարող ՀՀ ՊՆ-ն որպես պատվիրատու լինել բացառություն այդ շարքում:

7) Այժմ անդրադառնանք ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի ՊԺԿ Գ. Փաշիկյանի տեղեկանքին: Նախ անհայտ է, թե երբ է այդ տեղեկանքը տրամադրվել:

Բացի այդ, տեղեկանքի մեջ նշված է, որ մեջբերում եմ. <<բողոքարկումների արդյունքում խաթարվել է ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչության կարիքների համար պահանջվող բժշկական նշանակության ապրանքների գնման բնականոն ընթացքը, ինչի հետևանքով անհնար է դառնում հոսպիտալների ապահովումը պահանջվող կենսական նշանակության բժշկական ապրանքներով>> մեջբերման ավարտ:

Հարկանշականն այն է, որ որպես գնման բնականոն ընթացքի խաթարման պատասխանավորությունը սահուն կերպով դրվել է բողոքարկողների վրա, մինչդեռ ակնհայտ

է, որ եթէ ՀՀ ՁՈՒ ՌԲ վարչության որոշ պաշտոնյաներ դիտարկողյալ կամ պատահաբար չխախտեին «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները, ապա բողոքներ չէին ներկայացվի և որևէ գործընթաց չէր խաթարվի, այսինքն խաթարման սկզբնապատճառը հենց ՀՀ ՁՈՒ ՌԲ վարչության որոշ պաշտոնյաներն են, ովքեր փորձում են իրենց կողմից թույլ տրված սխալների պատասխանատվությունը բարդել փվյալ ընթացակարգերին մասնակցելու ցանկություն ունեցող, սակայն այդ հնարավորությունից զրկված ընկերությունների վրա:»:

Ընկերությունը, 25.04.2022թ.-ին ներկայացրած թիվ 2 դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«20.04.2022թ.-ի ժամը 17:10-ին Ձեր աշխատակազմի կողմից ստացել ենք ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը:

Ստորև կանդրադառնանք դրա բոլոր կետերին նույն հերթականությամբ:

1. Մեր բողոքում նշել էինք, որ «Չափաբաժիններ 1-ից 14-ի տեխնիկական բնութագրերում առկա է անիրագործելի պահանջ, մասնավորապես «Ստերիլ գործարանային փաթեթավորումով» պահանջը:»: Սրան ի պատասխան պաշտպանության նախարարությունը Ձեզ է ներկայացրել նախորդ տարվա մեր ընկերության պայմանագիրը՝ փաթեթանյութի մատակարարման վերաբերյալ, այսինքն պաշտպանության նախարարության «ապացույցը» մեր ընկերության հետ կնքված նախորդ տարվա պայմանագիրն է: Սա չի կարող դիտվել ապացույց այն պարզ պատճառով, որ եթե ինչ-որ ընկերություն իր պայմանագրում նշել է, որ այդ ապրանքները ստերիլ գործարանային փաթեթավորումով են, ապա դա դեռ չի բացառում, որ դա ընդամենը վրիպակի արդյունք է, որը սկզբից թույլ է տվել պատվիրատուն, իսկ այնուհետև մասնակիցը ավտոմատ արտագրելով նույն բնութագիրը մատակարարել է փվյալ ապրանքը: Այլ կերպ ասած, որևէ ընկերության հետ կնքված պայմանագրում վրիպակի արդյունքում գրված տեքստը չի կարող դիտվել փվյալ ապրանքի փաստացի ֆիզիկական հատկանիշների նկարագրություն, քանի որ պայմանագրով կարող է գրված լինել մեկ բան, իսկ ապրանքն ունենա փաստացի այլ բնութագիր: Տվյալ դեպքում, պաշտպանության նախարարությունը մեր բողոքով բարձրացված պնդումը հերքելու համար պետք է բերեր կոնկրետ փաստ, որևէ արտադրողից գրություն կամ կատալոգ կամ ձեռնարկ, որտեղ գրված կլիներ, որ փաթեթանյութերը կարող են լինել գործարանային ստերիլ փաթեթավորմամբ կամ ի վերջո իր պահեստում առկա այդ փաթեթանյութից մեկ նմուշ ներկայացնել կամ դրա գործարանային տուփի մի նկար, որի վրա գրված լիներ, որ փաթեթանյութը ստերիլ

գործարանային փաթեթավորմամբ է: Տվյալ դեպքում մեր ընկերության հետ կնքված նախորդ տարվա պայմանագիրը չի կարող հանդիսանալ էտալոն և դրա վրա հղումներ անել չի կարելի: Նշված փաթեթանյութում ներկցված ինդիկատորը իր գույնը փոխում է մանրէազերծումից հետո, հետևաբար չի կարող մատակարարվել <<գործարանային ստերիլ փաթեթավորմամբ>> փաթեթանյութ, որն արդեն գույնը փոխել է: Բացի այդ, այդ փաթեթանյութերը նախատեսված են նրա համար, որ դրանց մեջ դնեն ոչ ստերիլ գործիքներ ու հետո տեղադրեն ստերիլիզատորի մեջ, հետևաբար հարց է ծագում, ինչու պետք է փաթեթանյութը լինի ստերիլ գործարանային փաթեթավորման մեջ եթե դրա մեջ դրվելու են ոչ ստերիլ գործիքներ:

Բացի այդ, ինչու պետք է մի ապրանք լինի ստերիլ գործարանային փաթեթավորմամբ, որը մարդու մարմնի մեջ չի ներմուծվելու, մաշկային ծածկույթը չի խախտելու, արյան հետ չի փոխազդելու, այսինքն այդ փաթեթանյութը, ծառայելով որպես գործիքների համար պարկ, ակնհայտ է, որ ոչ միայն չի կարող ստերիլ լինել, այլ նաև բացարձակ անտրամաբանական է դրա ստերիլ լինելը:

Այդպիսի փաթեթանյութերը չեն կարող լինել <<գործարանային ստերիլ փաթեթավորմամբ>>: Այս ամբողջ պարզ տրամաբանությանը պաշտպանության նախարարությունը հակադարձում է ընդամենը մեկ պայմանագրով, որն ինչպես արդեն նշեցինք չի կարող դիտվել որպես էտալոն:

Հաշվի առնելով այն, որ պաշտպանության նախարարությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որ այդ փաթեթանյութերը կարող են լինել <<գործարանային ստերիլ փաթեթավորմամբ>>, ուստի մենք կներկայացնենք այդպիսի ապացույց: Մեր կողմից հարցում է ուղարկվել ռուսական ВИНАР ընկերությանը, որի արտադրանքը առաջարկել ենք ինչպես մենք նախորդ տարի, այնպես էլ բողոքարկված <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30>> ընթացակարգին հայտ ներկայացրած ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ ՍՊԸ-ն: Համաձայն ВИНАР ընկերության նամակի այդ փաթեթանյութերը սովորական ոչ ստերիլ փաթեթավորմամբ են (նամակագրության արտադրված էջը կցված է):

Ամփոփելով այս կետը, պետք է Ձեր ուշադրությունը հրավիրենք այն փաստի վրա, որ <<գործարանային ստերիլ փաթեթավորմամբ>> պահանջի վերաբերյալ մեր բողոքը վերաբերվում էր թվով 1-ից 14 չափաբաժինների բոլոր ապրանքներին, սակայն պաշտպանությունն նախարարությունը անդրադարձել է միայն 1, 2, 3 և 6, 7, 8, 9, 10, 11 ընթացակարգերի ապրանքներին, իսկ 4, 5, 12, 13, 14 չափաբաժինների ապրանքների մասով որևէ դիրքորոշում պաշտպանությունն նախարարությունը չի հայտնել:

2. ա) Մեր բողոքում մասնավորապես նշել էինք, որ թիվ 18 չափաբաժնին ընդամենը մեկ արտադրող է համապատասխանում: Մեր ընկերությունն ակնկալում էր, որ պաշտպանության նախարարությունը կտրամադրի երկրորդ արտադրողի անունը, սակայն դրա փոխարեն պաշտպանության նախարարությունը հղում է արել մեր ընկերության նախորդ տարվա այն բողոքի վրա, որը նույն ապրանքի վերաբերյալ էր և բարձրացված էր նույն հարցը՝ երկրորդ արտադրողի գոյություն ունենալու հարցը: Այսինքն պաշտպանության նախարարության նպատակն է ցույց տալ, որ եթե մեկ անգամ բողոքը մերժվել է, ապա այլևս կարիք չկա այդ հարցին անդրադառնալու և այս դեպքում ևս պետք է մերժել բողոքը: Այստեղ պաշտպանության նախարարությունը մոռացել է մեկ կարևոր դրվագ, մասնավորապես չի ուսումնասիրել, թե ինչ պատճառով է մերժվել նախորդ տարվա մեր բողոքը, ինչն առանցքային նշանակություն ունի:

Նախորդ տարվա մեր բողոքին ի պատասխան պաշտպանության նախարարությունը նշել էր երկրորդ արտադրողի անվանումը՝ Reach Surgical (Tiajin) Co., Ltd և մենք այդ ընկերությանը հարցում էինք ուղարկել, սակայն այդ ընկերությունը չէր պատասխանել մեր հարցմանը, ուստի մենք դրա մասին տեղեկացրել էինք գնումների հետ կապված բողոք քննող անձին և նշել, որ մեջբերում եմ. <<Ելնելով վերոգրյալից չենք կարող ոչ հերքել, ոչ հաստատել Reach Surgical ընկերության արտադրանքի համապատասխանությունը ՀՀ ՊՆ հրապարակած մրցույթի 22-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրին>> մեջբերման ավարտ: Ահա սա է այն պատճառը, որը հաշվի առնելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 2021թ-ին մերժել էր մեր բողոքը: Այժմ վերադառնանք 2022թ. և ցույց տանք, թե ինչն է փոխվել այս դեպքում և ինչ նոր փաստեր են ի հայտ եկել, որոնք չեն ներկայացվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 2021թ.-ին:

Ավելի մանրակրկիտ ուսումնասիրելով ՀՀ ՊՆ մատնանշած Reach Surgical (Tiajin) Co., Ltd ընկերության վերաբերյալ առկա տվյալները պարզեցինք, որ այն հանդիսանում է Genesis Medtech ընկերության դուստր ձեռնարկություն, որի մասին գրված է պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ <http://www.genesimedtech.com/how-we-work>

Էջի ստորին հատվածում գրված է՝ *Our subsidiary Reach Surgical is the largest local minimally invasive surgical enterprise in China.*

Եվս մեկ ապացույց այս հղմամբ է

http://www.reachsurgical.com/index.php?s=/professional/59&fouce_en=1

Գրված է Reach Surgical, իսկ հենց դրա ներքևում A Genesis Medtech Company:

Նույն կայքի ստորին հատվածում բարձր որակով պատկերված է հենց այն գործիքը, որն ըստ պաշտպանության նախարարության համապատասխանում է իրենց պահանջած տեխնիկական բնութագրին: Ուշադիր զննելով գործիքի նկարը, կարող ենք փաստել, որ դրա վրա ոչ մի մասում առկա չեն ռեպինտ ներդիրներ, մինչդեռ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30>> ընթացակարգի թիվ 18 չափաբաժնի տեխնիկական բնութագրում մասնավորապես գրված է, մեջբերում եմ. <<Բրանշերի առբերման ներքին մակերեսի վրա առկա են ռեպինտ ներդիրներ ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա որի շնորհիվ կանխվում է սահումը և դառնում է հարմարավետ բժշկի աշխատանքը>> մեջբերման ավարտ: Փաստացի ռեպինտ ներդիրներ առկա չեն ոչ ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա, և ոչ էլ բրանշերի առբերման ներքին մակերեսի վրա:

Եվս մեկ ապացույց ներկայացված է Reach Surgical ընկերության Յություբյան էջում, մասնավորապես դիտելով Reach Surgical ընկերության կողմից սեփական էջում բեռնված տեսահոլովակը (1 րոպե 35-րդ վայրկյան, 1 րոպե 43-րդ վայրկյան, 3 րոպե 18-րդ վայրկյան) իրենց արտադրանքի մասին <https://www.youtube.com/watch?v=ljPOnboepfg&t=9s> , համոզվում ենք ևս մեկ անգամ, որ ռեպինտ ներդիրներ առկա չեն ոչ ձեռքի ակտիվացման կոճակների, ոչ ռոտացիոն օղակի վրա, մինչդեռ այդպիսի պահանջ է առկա տեխնիկական բնութագրում: Հարգելի պարոն Օհանյան, որպեսզի տեսնեք, թե ինչպիսի տեսք ունեն << ՊՆ կողմից պահանջվող այդ ռեպինտ ներդիրները և համադրեք վերոնշյալ տեսանյութերում առկա ապրանքի տեսքի հետ, ներկայացնում ենք մեր մոտ առկա նկար Ethicon Endo Surgery արտադրության HAR23 մոդելից, որտեղ մուգ մոխրագույն շերտը հենց այդ այսպես կոչված <<ռեպինտ ներդիրներ>>-ն են, որոնց առկայությունը պահանջվում է << ՊՆ կողմից:

Այդ <<ռեպինտ ներդիրներ>>-ը կարելի է տեսնել նաև հետևյալ տեսահոլովակում <https://www.youtube.com/watch?v=do0BNWZJS3s> (2 րոպե 15-րդ վայրկյան):

Որպեսզի ավելի ակնառու ցույց տանք, որ Reach Surgical ընկերության հարմոնիկ ծայրադիրը չունի << ՊՆ պահանջած ռեպինտ ներդիրները, ստորև իրար տակ ներկայացված են Reach Surgical և Ethicon Endo Surgery ընկերությունների հարմոնիկ ծայրադիրների նկարները:

Reach Surgical

Ethicon Endo Surgery

Երկու նկարների համադրությունից հստակ երևում է, որ վերևի նկարում պատկերված հարմոնիկ ծայրադիրը չունի ռեպինտ ներդիրներ (կապույտ հատվածների վրա

որևէ ներդիր չկա), իսկ ստորին նկարի վրա հստակ երևում են <<ներդին ներդիրները>> բրանջերի առբերման ներքին մակերեսի, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա:

Ստորև ներկայացնում ենք ևս մեկ ապացույց առ այն, որ ՀՀ ՊՆ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30>> ընթացակարգի թիվ 18 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ուղղորդված է, խտրական և դրան համապատասխանում է միայն Ethicon Endo Surgery ընկերության HAR23 մոդելը: Ընթերցելով տեխնիկական բնութագիրը, դժվարությամբ թարգմանելով այն ռուսերեն (չնայած դրա պարտավորությունը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ դրված է պատվիրատուների վրա), և կատարելով որոնում համացանցում, հայտնաբերել ենք, որ այդ տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ արտագրված է հետևյալ կայքից

https://medichome.ru/shop/elektrohirurgiya/vs-dlya-harmonic/rashodnye_materialy_dlya_harmonic/nozhnicy-koagulyacionnye-harmonic-har23/

Այդ կայքում նկարագրված է կոնկրետ Ethicon Endo Surgery ընկերության HAR23 մոդելը, այսինքն պատվիրատուն ուղղակի նույնությամբ թարգմանել է Ethicon Endo Surgery ընկերության HAR23 մոդելի բնութագիրը, այսինքն ոչ թե ուսումնասիրել է մի քանի արտադրողի տեխնիկական բնութագրերը և միջինացրել դրանք, այլ ուղղակի թարգմանել և արտագրել է կոնկրետ արտադրողի կոնկրետ մոդելի բնութագիրը, հետևաբար այստեղ խոսք գնալ չի կարող այն մասին, որ այդ բնութագրին կարող է համապատասխանել մեկ այլ արտադրող:

Դա ավելի ակնառու ցույց տալու համար ստորև մեջբերում ենք այդ կայքում առկա բնութագիրը և ՀՀ ՊՆ <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30>> ընթացակարգի թիվ 18 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը:

Ножницы коагуляционные с эргономичной pistolетной рукояткой для открытых и эндоскопических операций, с ручной активацией, с технологией адаптации к тканям. Предназначены для одновременного рассечения и коагуляции тканей и сосудов диаметром до 5 мм. При отсутствии активации могут использоваться в качестве граспера, зажима. Частота колебания титанового лезвия ножниц в продольном направлении 55,5 кГц. Возможность активации насадки с помощью кнопок включения в минимальном и максимальном режимах мощности, расположенных на передней поверхности корпуса насадки для быстрого доступа, или с помощью ножного привода (педали). Корпус рукоятки имеет встроенный механизм тактильной и звуковой индикации полного сведения бранши. Наличие системы обратной связи с генератором и контроля температуры активного лезвия насадки, посредством генератора G11 (Джен Илевен), для повышения эффективности и скорости работы инструментом, а также снижения уровня латерального повреждения тканей. Наличие дополнительного звукового сигнала, оповещающего о начале повышения температуры активного лезвия, для более совершенного контроля качества гемостаза. Ствол с антибликовым покрытием. Длина ствола - 23 см от конца активной бранши до кольца ротации. Диаметр ствола - 5 мм. Ротация ствола на 360 градусов при помощи

ротационного кольца, расположенного на стыке ствола и рукоятки насадки (для быстрого доступа при помощи одной руки) - облегчает визуализацию и доступ к оперируемой ткани. Имеется индикатор длины 5 мм на обеих боковых сторонах пассивной бранши. Наличие резьбового разьема для соединения с лапаросонической рукояткой. Пистолетная рукоятка сведения браншей. Наличие резиновых прокладок на внутренней стороне рукоятки сведения браншей, кнопках ручной активации и ротационном кольце, препятствующих скольжению и способствующих комфортному размещению руки хирурга. Рабочая часть состоит из активной (лезвие) и пассивной браншей. Активная бранша титановая, с покрытием для снижения степени налипания, изогнутая, для улучшения визуализации рабочего пространства, имеет в сечении шестигранную форму. Выпуклая и изогнутая поверхности, а также проксимальная часть активной бранши предназначены в основном для коагуляции тканей. Острые верхняя и нижняя грани, а также дистальная часть активной бранши (кончик) служат для рассечения тканей. Пассивная бранша имеет пластиковую накладку с насечками для эффективной работы с тканями

Մկրատը կոագուլացիոն էրգոնոմիկ ապրճանակային բռնակով բաց և էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Նախատեսված է մինչև 5 մմ տրամագծով հյուսվածքների և անոթների հապման և կոագուլացիայի համար: Ակտիվացիայի բացակայության պայմաններում կարող է օգտագործվել որպես գրասպեր և զածիմ: Տիրանային սայրի տարանունների հաճախությունը երկայնական ուղղությամբ 55,5 կ<g: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել հզորության կարգավորման մինիմալ և մաքսիմալ կոճակների միջոցով որոնք տեղակայված են բռնակի հիմքի առաջային մակերեսի վրա որի միջոցով հնարավոր է լինում ապահովել մաքսիմալ հասանելիություն ինչպես նաև ուրքի սեղմակի միջոցով: Բռնակը ունի ներկառուցված համակարգ որը զգայական և ծայնային ցույց է տալիս բրանշերի ամբողջական փակումը: Առկա է հեպտադարձ կապի համակարգ գեներալորի հետ և ծայրադիրի ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկողության համար Գեն 11 ի միջոցով: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել ծայրադիրի աշխատանքի արդյունավետությունը և արագությունը ինչպես նաև նվազեցնում է հյուսվածքների կողմնային ջերմային վնասումը: Առկա է լրացուցիչ ծայնային ազդանշան որը զգուշացնում է ակտիվ սայրի ջերմաստիճանի բարձրացման մասին որը հնարավորություն է տալիս ապահովել ավելի վստահելի հեմոստազ: Ցողունը հակափայլային ծածկույթով: Ցողունի երկարությունը 23 սմ ակտիվ բրանշի ծայրից մինչև ռուբացիոն օղակը: Ցողունի տրամագիծը 5 մմ: Ցողունի պտույտը 360 աստիճանով ռուբացիոն օղակի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման տեղում հնարավորություն է տալիս աշխատել մեկ ձեռքով հեշտացնում է տեսանելիությունը և հասանելիությունը վիրահատական դաշտին: Առկա է երկարության 5 մմ ինդիկատոր պասիվ բրանշի երկու կողային մակերեսների վրա: Առկա է ակոսավոր մուտք ձեռքի բռնակի հետ միանալու համար: Բրանշերի առբերման ապրճանակային բռնակ: Բրանշերի առբերման ներքինմակերեսի վրա առկա են ռեփին ներդիրներ ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռուբացիոն օղակի վրա որի շնորհիվ կանխվում է սահումը և դառնում է հարմարավետ բժշկի աշխատանքը: Աշխատանքային մասը կազմված է ակտիվ սայր և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիրանային է ունի հատուկ ծածկույթ որը կանխում է հյուսվածքների կպումը թեք է որը ապահովում է օպտիմալ վիզուալիզացիան և կտրվածքի վրա ունի վեցանկյուն տեսք: Թեք արտափքված և ակտիվ բրանշի պրոքսիմալ մասերը նախատեսված են հիմնականում հյուսվածքների կոագուլացիայի համար: Սուր վերին և ստորին եզրերը ինչպես նաև ակտիվ բրանշի դիստալ մասը նախատեսված են հատելու համար: Պասիվ բրանշը ունի ակոսավոր պլաստիկ վրադիր հյուսվածքների հետ էֆֆեկտիվ աշխատելու համար: Մատակարարվում է աշխատանքային մասի կողպեքով: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար ենթակա չէ կրկնակի ախտահանման համար: Մատակարարվում են ստերիլ կարող են կիրառվել կարդիոստիմուլյատորներով հիվանդների մոտ: Համարվելի են Գեն 11 գեներալորների հետ հատուկ հարմոնիկ ադապտորի միջոցով: N6 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:

բ) 40, 41, 58 և 59 չափաբաժինների մասով ՀՀ ՊՆ-ն նշել է, որ մեջբերում են.

<<նախատեսված են հոսպիտալներում առկա HARMONIC և GEN11 գեներալորների համար և օգտագործվում են միայն այդ գեներալորների հետ: Նշված չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակներից բացի մասնակցության հայտով

ներկայացված Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքի համարժեք ապրանքատեսակներ է արտադրում նաև Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերությունը:»» մեջբերման ավարտ:

Մեր ընկերությունը հարցում է ուղարկել ՀՀ ՊՆ մարնանշած ընկերությանը, մասնավորապես հարցրել ենք, արդյոք Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերության կողմից արտադրված ապրանքները համապետելի են «GEN11» գեներապորների հետ (ինչը ՀՀ ՊՆ կողմից սահմանված պարտադիր պահանջ է):

Պատասխան գրությամբ Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերությունը հայտնել է, որ իրենց արտադրած մկրատները և բռնակները համապետելի են միայն իրենց արտադրության գեներապորի հետ և համապետելի չեն որևէ այլ արտադրողի գեներապորի հետ (նամակագրության արտադրված էջը կցված է):

Փաստացի ՀՀ ՊՆ պաշտոնյաները դիտավորյալ սխալ տեղեկություններ են տրամադրում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ցույց տալով, թե իբր կազմել են այնպիսի տեխնիկական բնութագիր, որին համապատասխանում է մեկից ավելի արտադրող, սակայն հենց իրենց մարնանշած արտադրողը հերքում է դա: Տրամաբանական հարց է ծագում, արդյոք ՀՀ ՊՆ պաշտոնյաները չէին կարող նույն հարցումը կատարել այդ արտադրողին ու հետո նոր դրա հիման վրա դիրքորոշում հայտնել: Բնականաբար ՀՀ ՊՆ պաշտոնյաները զրկված չէին այդ հնարավորությունից, կարող էին նախապես ճշտել այդ արտադրողի պատասխանը, համադրել իրենց բնութագրի հետ, սակայն միտումնավոր չեն գնացել այդ ճանապարհով ու որոշել են ուղղակի մի արտադրողի անուն գրել իրենց դիրքորոշման մեջ՝ հույս ունենալով որ Մեղէքսպերտ ընկերությունը չի կարողանա կապ հաստատել և պարզել իրականությունը: Վստահ ենք, որ մեր դիրքորոշումը և դրա մեջ նշված հիմնավորումները ընթերցելուց հետո, ՀՀ ՊՆ պաշտոնյաները այսուհետ որպես երկրորդ արտադրող կնշեն այնպիսի ընկերության անուն, որը ոչ կայք կունենա, ոչ կունտակտային տվյալներ, այլ կերպ ասած ՀՀ ՊՆ պաշտոնյաները կառաջարկեն որպես երկրորդ արտադրող այնպիսի ընկերություն, որի արտադրանքի վերաբերյալ տվյալները ուղղակի ստուգել հնարավոր չի լինի և հենց դա պատճառաբանելով էլ կհասնեն մեր բողոքի մերժմանը, քանի որ գիտեն, որ իրենց առաջարկած երկրորդ արտադրողի արտադրանքի համապատասխանությունը ստուգելու պարտականությունը բողոք քննող անձը կարող է դնել բողոքաբերի վրա, իսկ վերջինս էլ բնականաբար չկարողանալով որևէ կերպ կապ հաստատել այդ արտադրողի հետ, չի կարողանա ցույց տալ բնութագրերի տարբերությունը: Դա կանխելու նպատակով, խնդրում ենք ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա, որպեսզի կանխվի ՀՀ ՊՆ այս գործելաոճը և այսուհետ պարտադրվի ՀՀ ՊՆ-ին ներկայացնել որպես երկրորդ արտադրող այնպիսի ընկերություն, որի արտադրանքի համապատասխանությունը հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրին կարելի կլինի ստուգել որևէ եղանակով, հակառակ դեպքում մեր մոտ և բողոք քննող անձի մոտ պետք է հարց ծագի, թե ինչպես է ՀՀ ՊՆ-ն պնդում, որ ինչ-որ արտադրողի ապրանք համապատասխանում է իրենց հրավերի տեխնիկական բնութագրերին այն պարագայում, երբ որևէ կերպ հնարավոր չէ ստուգել այդ արտադրողի արտադրանքի բնութագրերը, այսինքն ՀՀ ՊՆ-ն նման դիրքորոշում հայտնելուց առաջ, ենթադրվում է, որ նախ ինքը պետք է կարողանար ճշտել առաջարկվող երկրորդ արտադրողի արտադրանքի համապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրերին ու հետո նոր որպես այլընտրանք առաջարկել բողոքաբերին և բողոք քննող անձին և այդ տեսանկյունից տրամաբանորեն հարց է ծագելու, թե ՀՀ ՊՆ-ն ինչի հիման վրա է պնդում, որ իր առաջարկված երկրորդ արտադրողի ապրանքը համապատասխանում է հրավերի տեխնիկական բնութագրերին, այսինքն ինչ եղանակով է դա պարզել ՀՀ ՊՆ-ն, ինչպես է կապ հաստատել այդ արտադրողի հետ կամ ինչ փաստաթղթերի հիման վրա է պնդում, որ այդ արտադրողի ապրանքը համապատասխանում է ՀՀ ՊՆ հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրերին:

գ) 42, 43, 44, 45, 48, 53, 54, 55, 56 և 57 չափաբաժինների մասով ՀՀ ՊՆ-ն նշել է, որ մեջբերում են. «գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ևս առանձին չեն օգտագործվում, հանդիսանում են հոսպիտալներում առկա տարբեր բազմանգամյա օգտագործման գործիքների միանվագ օգտագործման բաղկացուցիչ մասեր: Ընդ որում 53 և 54 -րդ չափաբաժիններով 3 մասնակցիների կողմից առաջարկվել է 2 տարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքներ:» մեջբերման ավարտ:

Այստեղ նախ հարկ է նշել, որ մասնակիցների կողմից թվով երկու արտադրողների ապրանք առաջարկելը դեռ չի նշանակում, որ այդ երկու արտադրողների ապրանքերը համապատասխանում են հրավերի տեխնիկական բնութագրերին, քանի որ մասնակիցների մասնագիտական կարողությունները տարբեր են և հնարավոր է, որ օրինակ մասնակիցներից մեկը վրիպակ թույլ տված լինի կամ մանրամասն համադրած չլինի իր առաջարկված արտադրողի և հրավերի տեխնիկական բնութագրերը, ուստի չի կարելի հիմնվել մասնակիցների կողմից երկու արտադրողի ապրանք առաջարկելու հանգամանքի վրա:

Բացի այդ առկա է հակասություն ՀՀ ՊՆ դիրքորոշման մեջ, մասնավորապես մի կողմից նշվում է, որ գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ևս առանձին չեն օգտագործվում, հանդիսանում են հոսպիտալներում առկա փարբեր բազմանգամյա օգտագործման գործիքների միանվագ օգտագործման բաղկացուցիչ մասեր, այսինքն ՀՀ ՊՆ-ն ակնարկում է, որ դրանց արտադրող ընկերությունը մեկն է, քանի որ դրանք <<բաղկացուցիչ մասեր>> են, սակայն նախադասության երկրորդ հատվածում գիտակցելով իր սխալը փորձում է արդարանալ, նշելով որ 53 և 54 -րդ չափաբաժիններով 3 մասնակիցների կողմից առաջարկվել է 2 փարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքներ:»: Սրացվում է, որ ՀՀ ՊՆ-ն մի կողմից <<հիմնավորում է և արդարացնում է>> մեկ արտադրող լինելու փաստը, իսկ մյուս կողմից հերքում է ինքն իրեն՝ որպես <<ապացույց>> ներկայացնելով 3 մասնակիցների կողմից առաջարկված 2 փարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքներ լինելու հանգամանքը:

Բացի այդ, մեր կողմից համադրվել է հրավերի տեխնիկական բնութագրերը Johnson & Johnson ընկերությունների ընտանիքին պատկանող Ethicon ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ձեռնարկում նշված նույն ցուցանիշների հետ:

https://www.jnjmedtech.com/sites/default/files/user_uploaded_assets/pdf_assets/2021-06/Ligation-Portfolio-Brochure-066249-210331.pdf

Արդյունքում պարզվել է, որ առկա է անհամապատասխանություն Ethicon ընկերության ձեռնարկում նշված ցուցանիշների և հրավերի տեխնիկական բնութագրերի միջև, մասնավորապես 53-րդ չափաբաժնով պահանջվող <<Բացած վիճակում 5,5 մմ, փակած վիճակում 8,7 մմ>> և 54-րդ չափաբաժնով պահանջվող <<Բացած վիճակում 8 մմ, փակած վիճակում 12 մմ>> ցուցանիշները չեն համապատասխանում ձեռնարկում նշված ցուցանիշներին:

Այժմ անդրադառնանք 42, 43, 44, 45, 48, 55, 56 և 57 չափաբաժիններին: Որևէ երկրորդ արտադրողի տվյալ այս չափաբաժինների մասով ՀՀ ՊՆ-ն չի տրամադրել: Փաստացի այս չափաբաժինների մասով ՀՀ ՊՆ-ն ընդունում է, որ դրանց համապատասխանում է մեկ արտադրող և դա պատճառաբանում է նրանով, որ մեջբերում են <<գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ևս առանձին չեն օգտագործվում, հանդիսանում են հոսպիտալներում առկա փարբեր բազմանգամյա օգտագործման գործիքների միանվագ օգտագործման բաղկացուցիչ մասեր>>: Կարծում ենք, որ ՀՀ ՊՆ-ն իրավունք չունի սահմանել այնպիսի տեխնիկական բնութագիր, որին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող: Ընդ որում, Գնումների մասին օրենքի

Հողված 23-ով կարգավորվող ապրանքներ այս ընթացակարգի ապրանքները չեն հանդիսանում:

Եթե հեղուկներ այդ տրամաբանությանը, ապա իրավաչափորեն հարց է ծագում, թե ինչ նպատակով է հայտարարված այդ մրցույթը: Եթե նպատակը հյուսվածքները կարող կամ ֆիքսող պարագաների ձեռք բերումն է, ապա այդ կարիքը բավարարելու համար ՀՀ ՊՆ-ն կարող էր հնարավորություն տալ մասնակիցներին իրենց հաշվին մատակարարել այդ ամրակների ու քարտրիջների տեղադրման համար անհրաժեշտ գործիքները, մինչդեռ տեխնիկական բնութագիրը գրված է այնպես, որ նույնիսկ Ethicon ընկերության արտադրանքը դրան չի համապատասխանում: Որպեսզի իրավիճակը ավելի պարզ ներկայացնենք, առաջարկում ենք համադրել գնվող ապրանքների և դրանց տեղադրման համար կիրառվող գործիքների արժեքները, այսինքն ձեռք բերվող մեկանգամյա օգտագործման ամրակների և քարտրիջների արժեքը նվազագույնը տասն անգամ ավելի թանկ է, քան այդ պարագաների տեղադրման համար հոսպիտալներում առկա գործիքները: Այսինքն մի կողմից ՀՀ ՊՆ-ն պահանջում է, որ մատակարարվող ապրանքները լինեն համատեղելի արդեն իր մոտ առկա գործիքների հետ, սակայն մյուս կողմից հնարավորություն չի տալիս մասնակիցներին մատակարարել այլ գործիքների հետ համատեղելի պարագաներ և միաժամանակ նվիրել այդ գործիքները, որոնցով ՀՀ ՊՆ-ն կարող է բավարարել իր կարիքները:

Տվյալ դեպքում կարևորը ՀՀ ՊՆ կարիքների բավարարումն է և մասնակիցները չեն կարող զրկված լինել ՀՀ ՊՆ-ին անվճար տրամադրվող գործիքների հետ միասին դրանց հետ համատեղելի մեկանգամյա պարագաներ մատակարարելու հնարավորությունից: Հակառակ դեպքում ստացվում է, որ անհիշելի ժամանակներից ինչ-որ մեկ ընկերություն ՀՀ ՊՆ-ին մատակարարել է գործիք ու հիմա ՀՀ ՊՆ-ն <<ստիպված է>> մի քանի տասնամյակ գնել միայն այդ գործիքի հետ համատեղելի և տասն անգամ այդ գործիքից թանկ արժեքով մեկանգամյա պարագաներ՝ կրելով ֆինանսական վնասներ:

դ) 46, 47, 49, 50, 51 և 52 չափաբաժինների մասով ՀՀ ՊՆ-ն նշել է, որ մեջբերում են. <<բացի մասնակցության հայտով ներկայացված Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքի համարժեք ապրանքատեսակներ են արտադրում նաև Meril Endo-Surgery Pvt. Ltd. (Հնդկաստան), Medtronic Covidien ընկերությունը (ԱՄՆ), Changzhou Haiers Medical Devices Co., Ltd (Չինաստան) և Grena Think Medical (Միացյալ թագավորություն) ընկերությունները:>>:

Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ ՊՆ մարտնչած արտադրողների ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերից:

Այժմ անդրադառնանք այդ չափաբաժիններին հերթով և ներկայացնենք կոնկրետ անհամապատասխանություններ յուրաքանչյուր արտադրողի մասով:

Հրավերի չափաբաժնի համար	Հրավերով պահանջվող տեխնիկական և բնութագիր	Meril Endo-Surgery Pvt. Ltd. անհամապատասխանություն	Medtronic Covidien անհամապատասխանություն	Changzhou Haiers Medical Devices Co., Ltd անհամապատասխանություն	Grena Think Medical անհամապատասխանություն
46 Ցիրկոլյար կարող կտրող գործիք 29 մմ	Ցիրկոլյար կարող կտրող գործիք 29 մմ: Հիմնական բռնակներ և կարելու բռնակը և բնութագրերը կից հղմամբ https://www.merilife.com/assets/pdfs/medical-devices/mirus-circular-stapler-1618220405pdf.pdf	Անհամապատասխանություն N1 Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռեպրինապատ քեն (ապրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.medtronic.me/content/dam/covidien/library/ca/en/product/surgical-stapling/CA-SI-0041-E-DST-Series-EEA-Brochure.pdf և https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/circular-staplers.html սեղմելով էջի վրա առկա երկրորդ ապրանքի ORDER INFORMATION բաժինը)	Անհամապատասխանություն N1 Ցիրկոլյար կարող գործիք 28 մմ Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռեպրինապատ քեն (ապրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ http://www.medtronic.me/content/dam/covidien/library/ca/en/product/surgical-stapling/CA-SI-0041-E-DST-Series-EEA-Brochure.pdf և https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/circular-staplers.html սեղմելով էջի վրա առկա երկրորդ ապրանքի ORDER INFORMATION բաժինը)	Անհամապատասխանություն N1 Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռեպրինապատ քեն (ապրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.hasmedicalstapler.com/Disposable_Circular_Stapler) Անհամապատասխանություն N2 բաց սեղմակի բարձրությունը 4.8 մմ Անհամապատասխանություն N3 փակ սեղմակի բարձրությունը 1.9- ից 2.1 մմ	Անհամապատասխանություն N1 Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռեպրինապատ քեն (ապրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ http://omega-med.ru/catalog/pages/grena-106.pdf) Անհամապատասխանություն N2 բաց սեղմակի բարձրությունը DCSCN-29 մոդելի դեպքում 4.8 մմ , իսկ DCSCN-29C

	<p>մմ. բաց սեղմ ակի բար ծրու թյու նը ոչ պակ աս քան 5.5 մմ. փակ սեղմ ակի բար ծրու թյու նը կար գավ որվո ղ 1,0 ից 2.5 մմ:</p>	<p>սեղմակի պակի լայնությունը 4.5 մմ</p>			<p>մոդելի դեպքում 5.3 մմ</p>
<p>47 Յիրկո պար կոր կորոզ - կարող ապարար , 33մմ</p>	<p>Յիր կույ ար կար ող կոր ող գործ իք 33 մմ: Հիմ նակ ան բոն ակը և կար ելու բոն ակը ռեպ հնա պա փ չսահ ող մակ երես : Սեղ մակ ի պսակ լի լայն ությ ունը</p>	<p>Անհամապա տասխանությ ուն N1</p> <p>Հիմնական բոնակը և կարելու բոնակը ռեպրինապա փ չեն (սպրանքի փեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.merilife.com/assets/pdfs/medical-devices/mirus-circular-stapler-1618220405pdf.f.pdf)</p> <p>Անհամապա տասխանությ ուն N2</p> <p>սեղմակի պակի լայնությունը 4.5 մմ</p>	<p>Անհամապատասխանու թյուն N1</p> <p>Հիմնական բոնակը և կարելու բոնակը ռեպրինապա փ չեն (սպրանքի փեսքը և բնութագրերը կից հղմամբերով http://www.medtronic.me/content/dam/covidien/library/ca/en/product/surgical-stapling/CA-SI-0041-E-DST-Series-EEA-Brochure.pdf և https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/circular-staplers.html սեղմելով էջի վրա առկա երկրորդ սպրանքի ORDER INFORMATION բաժինը)</p> <p>Անհամապատասխանու թյուն N2</p> <p>բաց սեղմակի բարձրությունը 4.8 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>Յիրկույար կարող գործիք 32 մմ</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>Հիմնական բոնակը և կարելու բոնակը ռեպրինապա փ չեն (սպրանքի փեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.hasmedicalstapler.com/Disposable_Circular_Stapler)</p> <p>Անհամապատասխանություն N3</p> <p>բաց սեղմակի բարձրությունը 5 մմ</p> <p>Անհամապատասխանություն N4 փակ սեղմակի բարձրությունը 2.0-ից 2.2</p>	<p>Անհամապա տասխանու թյուն N1</p> <p>Հիմնական բոնակը և կարելու բոնակը ռեպրինապա փ չեն (սպրանքի փեսքը և բնութագրերը կից հղմամբ http://omega.med.ru/catalog/pages/gre-na-106.pdf)</p> <p>Անհամապա տասխանու թյուն N2</p> <p>բաց սեղմակի բարձրությունը 5 մմ</p>

	<p>ոչ ավելի քան 4.0 մմ, բաց սեղմ ակի բար ձրու թյու նը ոչ պակաս քան 5.5 մմ, փակ սեղմ ակի բար ձրու թյու նը կարգավորվող 1.0 ից 2.5 մմ:</p>				
<p>49 Ապարատ ցիրկուլյար, կարող - կտրող Լոնգոյի մեթոդով հեմոռոիդոպեքիա յի համար</p>	<p>ներկատուցված սայրի փրամագիծը - 21.7 մմ (սպրանքի բնութագրերը կից հղմամբ https://www.hasmedicalstapler.com/Disposabile_Hemorrhoids_stapler(PPH)?gclid=Cj0KCQjw6pOTBhCTARIsAHF23fjvm2ddta9JXqFcjPUQkx2CNUDI!W-ITz7QKzYNpFw1foWdoSuV6X0aAuR3EALw_wcB)</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>Լիցքավորված է 30 սեղմակներով</p> <p>Անհամապատասխանություն N3</p> <p>փակ ուղիկի բարձրությունը 1.8 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>ներկատուցված սայրի փրամագիծը - 21.7 մմ (սպրանքի բնութագրերը կից հղմամբ https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/open-staplers.html#eea-hemorrhoid-and-prolapse-stapler-set-with-dst-series-technology.html սեղմելով էջի վրա առկա EEA™ Hemorrhoid and Prolapse Stapler Set with DST Series™ Technology անվանումով սպրանքի ORDER INFORMATION բաժինը)</p> <p>(սպրանքի բնութագրերը կից հղմամբ https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/open-staplers.html#eea-hemorrhoid-and-prolapse-stapler-set-with-dst-series-technology.html)</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>պսակի լայնությունը 3.5 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>ներկատուցված սայրի փրամագիծը - 21.7 մմ (սպրանքի բնութագրերը կից հղմամբ https://www.hasmedicalstapler.com/Disposabile_Hemorrhoids_stapler(PPH)?gclid=Cj0KCQjw6pOTBhCTARIsAHF23fjvm2ddta9JXqFcjPUQkx2CNUDI!W-ITz7QKzYNpFw1foWdoSuV6X0aAuR3EALw_wcB)</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>Լիցքավորված է 30 սեղմակներով</p> <p>Անհամապատասխանություն N3</p> <p>փակ ուղիկի բարձրությունը 1.8 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>(սպրանքի բնութագրերը կից հղմամբ http://omega-med.ru/catalog/pages/gre-na-105.pdf)</p> <p>բաց ուղիկի բարձրությունը 3.8 մմ</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>Լիցքավորված է 30 սեղմակներով:</p> <p>Անհամապատասխանություն N3</p> <p>ներկատուցվ</p>	

	<p>նը 4 մմ, փակ ուրիկի բարձրությունը 0,75 – 1,5 մմ:</p> <p>Անհամապատասխանություն N3</p> <p>Լիցքավորված է 32 սեղմակներով</p>				<p>ած սայրի տրամագիծը – 22,2 մմ</p>
<p>50 Ցիրկոյյար կարող կտրող գործիք 25 մմ</p>	<p>Հիմնական պարունակը և կարելու բուն ակը ռեպինապար չեն (սպրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.medtronic.com/covidien/libr ary/co/en/product/surgical-stapling/CA-SI-0041-E-DST-Series-EEA-Brochure.pdf և https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/circular-staplers.html սեղմելով էջի վրա առկա երկրորդ սպրանքի ORDER INFORMATION բաժինը)</p> <p>Անհամապատասխանություն N2 սեղմակի պսակի լայնությունը 4.5 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>Հիմնական բունակը և կարելու բունակը ռեպինապար չեն (սպրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ http://www.medtronic.com/content/dam/covidien/libr ary/co/en/product/surgical-stapling/CA-SI-0041-E-DST-Series-EEA-Brochure.pdf և https://www.medtronic.com/covidien/en-us/products/surgical-stapling/circular-staplers.html սեղմելով էջի վրա առկա երկրորդ սպրանքի ORDER INFORMATION բաժինը)</p> <p>Անհամապատասխանություն N2 սեղմակի պսակի լայնությունը 4.8 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>Հիմնական բունակը և կարելու բունակը ռեպինապար չեն (սպրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ https://www.hasmedicalstapler.com/Disposable_Circular_Stapler)</p> <p>Անհամապատասխանություն N2 բաց սեղմակի բարձրությունը 4.5 մմ</p> <p>Անհամապատասխանություն N3 փակ սեղմակի բարձրությունը 1.5- ից 1.7 մմ</p>	<p>Անհամապատասխանություն N1</p> <p>Հիմնական բունակը և կարելու բունակը ռեպինապար չեն (սպրանքի տեսքը և բնութագրերը կից հղմամբ http://omega.med.ru/catalog/pages/gre na-106.pdf)</p> <p>Անհամապատասխանություն N2</p> <p>բաց սեղմակի բարձրությունը DCSCN-</p>	

<p>պակաս քան 5.5 մմ, փակ սեղմ ակի բար ձրու թյու նը կար գավ որվո ղ 1.0 հց 2.5 մմ:</p>															<p>25H մոդելի դեպքում 4.5 մմ, իսկ DCSCN-25HLC մոդելի դեպքում 4.8 մմ</p>
--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	---

Վերլուծելով վերոգրյալ աղյուսակը ակնհայտ է դառնում, որ ՀՀ ՊՆ աշխատակիցների կողմից որպես երկրորդ արտադրող մատնանշված թվով 4 արտադրողներից ոչ մեկի ապրանքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին:

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչպես են ՀՀ ՊՆ աշխատակիցները կազմել այս ապրանքների տեխնիկական բնութագիրը: Պատասխանն ակնհայտ է, բնականաբար ուղղակի արտագրել են Ethicon ընկերության համապատասխան ձեռնարկից, որը կցվում է: Այսինքն ՀՀ ՊՆ կողմից փաստացի այլ արտադրողների ձեռնարկներ չեն ուսումնասիրվել, պարամետրեր չեն միջինացվել, տեխնիկական բնութագիրը որպես այդպիսին իրենից ներկայացնում է կոնկրետ Ethicon ընկերության ձեռնարկում առկա ցուցանիշների արտագրություն առանց որևէ շեղման միջակայքի: Եվ սա ոչ թե մեկ կամ երկու, այլ բազմաթիվ ընթացակարգերով, քանի որ մոտեցումը համակարգային է:»:

<<Մեղէքսպերտ>> ՍՊԸ-ն օգտվելով բողոքի քննության ժամանակ բողոքի պահանջը փոխելու իր իրավունքից, խնդրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չկայացած հայտարարել ընթացակարգը միայն հետևյալ չափաբաժինների մասով

- 1-ից 14 չափաբաժինները այն պատճառաբանությամբ, որ այդ ապրանքները չեն կարող լինել ստերիլ գործարանային փաթեթավորման մեջ (տես արտադրող գործարանի պատասխանը), սակայն հրավերով այդպիսի պահանջ է սահմանված:

- 40, 41, 58 և 59 չափաբաժինները այն պատճառաբանությամբ, որ ՀՀ ՊՆ կողմից որպես այլընտրանքային արտադրող մատնանշված Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերությունը պատասխան նամակով հերքել էր իր ապրանքների համատեղելիությունը հրավերով սահմանված GEN11 գեներատորի հետ (տես Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերության պատասխան նամակը):

• 42, 43, 44, 45, 48, 55, 56 և 57 չափաբաժինները այն պատճառաբանությամբ, որ դրանց համապատասխանում է մեկ արտադրող, ընդ որում այդ ապրանքները Գնումների մասին օրենքի Հոդված 23-ով կարգավորվող ապրանքներ չեն հանդիսանում:

• 53, 54 չափաբաժինները այն պատճառաբանությամբ, որ դրանց չի համապատասխանում ոչ մի արտադրող:

• 46, 47, 49, 50 չափաբաժինները այն պատճառաբանությամբ, որ դրանց համապատասխանում է միայն Ethicon ընկերությունը, իսկ ՀՀ ՊՆ կողմից իբրև այլընտրանք ներկայացված թվով 4 արտադրողներից ոչ մեկի ապրանքները չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրերին (տես աղյուսակում մանրամասն նշված անհամապատասխանությունները յուրաքանչյուր արտադրողի մասով):

Հարգելի պարոն Օհանյան, որպես հիշեցում խնդրում ենք ՀՀ ՊՆ-ից պահանջել տրամադրել ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի ՊԺԿ Գ. Փաշիկյանի կողմից ստորագրված տեղեկանքի կոնկրետ օրն ու ամիսը:»:

Ելնելով վերոգրյալներից «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն՝ Բողոքներ քննող անձին խնդրել է չկայացած հայտարարել ընթացակարգը միայն 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը, դիրքորոշումներ է ներկայացրել նաև 28.04.2022թ.-ին և 29.04.2022թ.-ին:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 11.04.2022թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/6232-2022 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 13.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1776-2022 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Հայրնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության 2022թ. կարիքների համար ռազմաբժշկական ծառայության մասով հրապարակված թվով 13 գնման ընթացակարգերը ՀՀ գնումների հետ կապված բալո բներ քննող անձի մոտ բողոքարկվել են «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից:

Բողոքները վերաբերել են գնման ընթացակարգերի հրավերներում՝ ձեռքբերվող ապրանքների տեխնիկական բնութագրերի «Ծանոթություն» բաժնում սահմանված պահանջներին, որոնց անհրաժեշտությունն ու կարևորությունը մենք հիմնավորել ենք ՀՀ ՊՆ կողմից ներկայացված բրավոր դիրքորոշումներում և բողոքների մասով կայացած քննության նիստերում:

Ձեր 01.04.2022թ. թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2022/27 որոշմամբ՝ «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից 11.03.2022թ-ին ներկայացված ԳԲԲԱ-ԼՕ-2022/27 ծածկագրով բողոքն անհիմն լինելու պատճառաբանությամբ ամբողջությամբ մերժվել է:

«Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունները օգտվելով իրենց իրավունքից ներկայացրել են բողոքների լրացումներ, որոնք որևէ առնչություն չունեն ի սկզբանե ներկայացված բողոքների բովանդակության հետ (վճարման ժամանակացույցի անհամապատասխանություն, հրավերի ռուսերեն լեզվով հրապարակման պահանջ), և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են կայացնել որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովներին՝ գնանշման հարցման ընթացակարգերը չկայացած հայտարարելու մասին կայացնել որոշում:

Ձեր 08.04.2022թ. թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2022/35 որոշմամբ բավարարվել է «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության բողոքը՝ պարտադրելով ՀՀ պաշտպանության նախարարությանը ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ-22-9/20 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հարկ է նկատել, որ ռուսերեն լեզվով հրավերները չհրապարակելու վերաբերյալ «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից բողոքների լրացումներում բարձրացված հարցերը ամենևին չեն սահմանափակում նշված ընթացակարգերին իրենց մասնակցության իրավունքը, քանի որ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և որևէ խնդիր չունեն հայերեն լեզվի իմացության հետ (նշվածը հավաստվում է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքները և լրացումները հայերեն լեզվով ներկայացվելու փաստով): Ավելին, վերոհիշյալ գնման ընթացակարգերի հայտարարությունները հրապարակվել են նաև ռուսերեն, որոնք տալիս են ընդհանուր պատկերացումներ գնման առարկաների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում հիշյալ ընկերությունները լրացուցիչ տեղեկություններ կարող էին ստանալ գնահատող

հանձնաժողովին հարցում ուղարկելու կամ հրավերում նշված հեռախոսահամարով գնահատող հանձնաժողովի քարտուղարին զանգահարելու միջոցով ինչից սակայն վերջիններս չեն օգտվել:

Վերլուծելով «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների քայլերը՝ ակնհայտ է դառնում, որ վերջիններիս նպատակը՝ ամեն գնով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելն է, ինչը կրերի ՀՀ ՋՈՒ ապահովման խնդիրների առաջացման և բնականոն գործունեության խաթարման (ՀՀ ՋՈՒ ԳՇ ռազմաբժշկական վարչության տեղեկանքը կցվում է):

Գնման ընթացակարգերի հրավերները ռուսերեն լեզվով չհրապարակելու վերաբերյալ հայտնում եմ, որ հաշվի առնելով ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպվող մեծածավալ գնումները, գրանցում ներառված գնման առարկաների թարգմանությունը, ինչպես նաև վերջիններիս մեծ մասի տեխնիկական բնութագրերի թարգմանման համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները, առկա աշխատանքային ռեսուրսով հնարավոր չէ կազմակերպել պարզաճ թարգմանություն: Իսկ թարգմանչական ծառայությունների ձեռքբերման դեպքում էապես կերկարեն գնման գործընթացները, ինչի արդյունքում կառաջանա ՀՀ ՋՈՒ ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ ՀՀ ՊՆ կողմից կազմակերպված ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/15, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/17, ՀՀ-ՊՆ ԳՀԱՊՁԲ-22-9/18, ՀՀ-ՊՆ-ՎՀԱՊՁԲ-22 9/19, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/21, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/22, ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/23, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/25, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/26, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30 ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերները ռուսերեն լեզվով չհրապարակելու պարճառաբանությամբ ներկայացված բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելուց հաշվի առնել ստեղծված իրավիճակը, ՀՀ պետական ու պաշտպանական շահերը, ՀՀ ՋՈՒ անվտանգության խնդիրները և մերժել այդ բողոքները:»:

Պատվիրատուն, 13.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1778-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/50 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացնում եմ Պատվիրատուի դիրքորոշումը.

1. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում սահմանված 2.1 դրույթը՝ համաձայն որի «Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք

է ներկայացնի խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր), կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր), կամ խմբաքանակի հավաստագիր, կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:», «խոչընդոտում է մրցակցությունը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին, ուստի խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 13-ի 2 կետի 2 ենթակետի պահանջները՝ «2. Գնման առարկայի բնութագրերը՝... 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը»: », անհիմն է և չի համապատասխանում իրականությանը քանի որ, վերավաճառող ընկերություններից ապրանքի ձեռքբերման ժամանակ մատակարար ընկերությունը կարող է ապրանքի հետ պահանջել նաև նշված փաստաթղթերը՝ որոնք հասանելի են տվյալ ապրանքը վերավաճառող ընկերության համար, եթե այդ խմբաքանակը ձեռք է բերվել օրինական ճանապարհով արտադրողից կամ նրա պաշտոնական ներկայացուցից, կամ այլ վերավաճառող ընկերությունից: Ցանկացած դեպքում ապրանքի սկզբնաղբյուր հանդիսանում է արտադրողը, որը իր արտադրած ապրանքատեսակների հետ տրամադրում է պահանջվող փաստաթղթերը գնորդին և վերավաճառող ընկերությունն էլ պարտավոր է գնորդի պահանջով նշված փաստաթղթերը տրամադրել վաճառվող ապրանքի հետ միասին, իհարկե եթե խոսքը վերաբերում է պատշաճ տնտեսվարողին: Անհասկանալի է թե բողոքաբերը ինչ հիմքով է պնդում, որ բժշկական նշանակության ապրանքատեսակներ վերավաճառող հազարավոր ընկերությունների համար անհասանելի են պահանջված փաստաթղթերը:

Այն փաստը, որ խմբաքանակի որակը հավաստող փաստաթղթերը հասանելի են ոչ միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցիչներին և, որ վերավաճառող ընկերությունները վաճառվող ապրանքի հետ տրամադրում են նշված փաստաթղթերը, ապացուցվում է նրանով, որ բողոքաբերի կողմից բողոքարկված ընթացակարգերից մեկին մասնակցության հայտ ներկայացրած երկու ընկերություններն էլ հանդիսանալով ուղղակի վերավաճառող վաճառվող ապրանքի հետ տրամադրում են խմբաքանակի որակը հավաստող փաստաթուղթ:

Բացի այդ խմբաքանակի որակը հավաստող փաստաթղթի ներկայացման պահանջը հիմնավորվում է որակյալ ապրանք թեռք բերելու կարիքով:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ ապրանքի անորակ խմբաքանակի մատակարարում չթույլատրելու նպատակով՝ ապրանքի որակը հավաստող փաստաթղթի պահանջ դնելով, պարվիրատուն չի առաջացնում մրցակցության համար «չհիմնավորված խոչընդոտ» և չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Նշենք նաև, որ սույն ընթացակարգին փարբեր չափաբաժինների մասով մասնակցության հայտ են ներկայացրել 7 կազմակերպություն, ինչը ևս ապացուցում է պահանջի ոչ խտրական լինելը:

2. Բողոքաբեր ընկերության այն պնդումը, որ «մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժնում 2.3 դրույթով սահմանված պահանջը՝ համաձայն որի «Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայության («1.3» կետի) համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարը մատակարարված ապրանքի խմբաքանակի հետ պետք է ներկայացնի մատակարարված ապրանքների պիտանելիության ժամկետի 1/2—ի առկայության («1.3» կետին) համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:», խտրական է ևս չի համապատասխանում իրականությանը:

Ինչպես երևում է սահմանված դրույթից Պարվիրատուն ապրանքի պիտանելիության ժամկետի վերաբերյալ փաստաթուղթ պահանջում է այն դեպքում երբ մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հնարավորություն չի տալիս որոշելու մատակարարված ապրանքի մնացորդային պիտանելիության ժամկետի համապատասխանությունը պայմանագրի պահանջներին: Արտադրողի, կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից տրամադրված փաստաթղթի պահանջը հիմնավորվում է նրանով, որ հենց արտադրողն է տիրապետում այն տեղեկատվությանը թե երբ է արտադրվել տվյալ ապրանքը և ինքն է սահմանում պիտանելիության ժամկետը: Մատակարարված ապրանքի պիտանելիության ժամկետի որոշման համար կարող է հիմք հանդիսանալ մատակարարված ապրանքի գործարանային փաթեթավորման մեջ առկա ձեռնարկում նշված տեղեկատվությունը: Ինչ վերաբերվում է բաց աղբյուրներից տվյալ մոդելի ապրանքի պիտանելիության ժամկետի

վերաբերյալ փաստաթղթերին, ապա դրանք ընդունելի չեն այն պարզ պատճառով, որ անհայտ է թե այդ փաստաթղթի հրապարակումից հետո արտադրողը կատարել է պիտանելիության ժամկետների փոփոխություն թե ոչ, ինչպես նաև անհայտ է թե այդ այդ ձեռնարկը արտադրողի կողմից կազմված տարբերակն է, թե ենթարկվել է կամայական փոփոխությունների: Բացի այդ գտնում ենք որ վերավաճառող ընկերություններից ապրանքի ձեռքբերման ժամանակ մատակարարին ևս պետք է հետաքրքրի ձեռքբերվող խմբաքանակի պիտանելիության ժամկետի համապատասխանությունը իր կողմից կնքված պայմանագրի պահանջներին:

3. Պարզաբանման մեջ հնարավոր չէ հստակ նշել թե գնահատող հանձնաժողովը կոնկրետ որ իրավական ակտերով է գնահատելու փաստաթղթերը տրամադրած մարմնի կողմից ներկայացված փաստաթուղթը տրամադրելու իրավասությունները, քանի որ այս փուլում անհայտ է թե մատակարարը ապրանքների մատակարարման ժամանակ ում կողմից տրամադրված և ինչ փաստաթուղթ կներկայացնի

4. Բողոքաբերի այն պնդումը, որ 1-ից 14-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա է անիրագործելի պահանջ և որ որևէ մատակարար չի կարող մատակարարել այդ տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք ևս չի համապատասխանում իրականությանը: Սույն ընթացակարգով մասնակցության հայտ ներկայացված երկու ընտրություններից մեկը հայտ է ներկայացրել այդ բոլոր չափաբաժիններ ով, իսկ մյուսը 1, 2, 3, 6, 7, 8 և 9-րդ չափաբաժինների մասով:

5. Բողոքաբերի այն պնդումը, որ 18 և 40-ից - 59-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը հակասում են ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ0 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին չի համապատասխանում իրականությանը: 18, 40, 41, 44, 45, 46, 47, 49, 50, 51, 52, 55, 56, 57, 58 և 59-րդ չափաբաժիններով մասնակցության հայտ են ներկայացրել 2 ընկերություն, իսկ 53 և 54-րդ չափաբաժիններով՝ 3 ընկերություն:

6. Պատվիրատուն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը և հավելվածները, միայն հայերեն լեզվով հրապարակելիս առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ «1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմմում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հաւերեն, իսն գնումների, այդ թվում նախատրակավորման հայտարարութաւններո՝ նաև անգլերեն և ռուսերեն:».

Գտնում ենք, որ փաստաթղթերի կազմման և հրատարակման լեզվի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Լ որոշմամբ հաստատված «Գնումների գործնառնական կազմակերպման» կարգով սահմանված և իրարից փարբերվող պահանջների դեպքում՝ պարզապես պետք է առաջնորդվեր իրավական ավելի բարձր ուժ ունեցող փաստաթղթով:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ բողոքում առկա փաստացի և իրավական հիմքերը չեն համապատասխանում իրականությանը և, որ սահմանված դրույթները չեն հակասում օրենսդրության պահանջներին:»:

Պատվիրատուն, 20.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1941-2022 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեղէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/50 ծածկագրով բողոքի վերաբերյալ Պարզապես դիրքորոշման ներկայացնում են հետևյալը.

1. «Մեղէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից բողոքում նշված այն փաստարկը, որ ընթացակարգի 1-ից 14-րդ շափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա «Սպերիլ գործարանային փաթեթավորման» պահանջը անիրագործելի է հակասում է նույն ընկերության կողմից 2021թ. «ԳՀԱՊՁԲ-21-9/18» ընթացակարգի շրջանակներում ներկայացված մասնակցության հայտի հավելված 1.1-ով ներկայացված տեղեկատվությանը, համաձայն որի «Մեղէքսպերտ» ՍՊ ընկերությունը առաջարկում էր մատակարարել հենց սպերիլ գործարանային փաթեթավորմամբ ապրանքատեսակներ, որոնք համապատասխանում են ընկերության կողմից բողոքարկված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ- 22-9/30» ընթացակարգի 2-րդ և 6-րդ շափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակներին: Անհասկանալի է, թե «Մեղէքսպերտ» ՍՊ ընկերությունը 2021 թ-ին ԳՀԱՊՁԲ-21-9/18-4 պայամանագրի շրջանակներում այդ երկու ապրանքատեսակը մատակարարելուց հետո, ինչ հիմքով է ներկայացված բողոքում պնդում տեխնիկական բնութագրերում անիրագործելի պահանջի առկայությունը, այն դեպքում, որ և ԳՀԱՊՁԲ- 21-9/18 ընթացակարգի մասնակցության հայտը, և այդ հայտի հավելված 1.1-ը, և այդ ընթացակարգի շրջանակներում կնքված մատակարարման պայմանագիրը, և

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագրերում անիրագործելի պահանջի առկայության մասին պնդումով բողոքը ստորագրված են բողոքաբեր ընկերության տնօրենի կողմից: Նշված փաստաթղթերի համեմատելիս ակնհայտ է, որ մեկով ընկերությունը առաջարկում է մատակարարել սպերիլ

գործարանային փաթեթավորմամբ ապրանքատեսակներ, իսկ մյուսով՝ պնդում է որ այդ պահանջը անիրագործելի է: (ԳՀԱՊՁԲ-21-9/18 ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, հավելված 1.1-ը և «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության հետ կնքված 9-ՀԱՊՁԲ-21-9/18-4 պայամանագրի էլեկտրոնային տարբերակները կցվում են):

2. Բողոքաբեր ընկերության կողմից բողոքում ներկայացված՝ 18 և 40-59-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը միայն մեկ արտադրողի ապրանքատեսակին համապատասխանության մասին տեղեկատվության վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալը.

ա) 18 Չափաբաժնի մասով բողոքաբերը նույնաբովանդակ բողոք էր ներկայացրել 2021թ-ին իրականացված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/43 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում: Ներկայացված բողոքը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/96 որոշմամբ, մերժվել է ամբողջությամբ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

բ) 40, 41, 58 և 59, չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները նախատեսված են հոսպիտալներում առկա HARMONIC և GEN11 գեներատորների համար և օգտագործվում են միայն այդ գեներատորների հետ: Նշված չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակներից բացի մասնակցության հայտով ներկայացված Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքի համարժեք ապրանքատեսակներ է արտադրում նաև Innolcon Medical Technology (Suzhou) Co. Ltd ընկերությունը:

գ) 42, 43, 44, 45, 48, 53, 54, 55, 56 և 57 չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ևս առանձին չեն օգտագործվում, հանդիսանում են հոսպիտալներում առկա տարբեր բազմանգամյա օգտագործման գործիքների միանվագ օգտագործման բաղկացուցիչ մասեր: Ընդ որում 53 և 54 -րդ չափաբաժիններով 3 մասնակցիների կողմից առաջարկվել է 2 տարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքներ:

դ) 46, 47, 49, 50, 51 և 52 չափաբաժինների մասով բացի մասնակցության հայտով ներկայացված Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքի համարժեք ապրանքատեսակներ են արտադրում նաև Meril Endo-Surgery Pvt. Ltd. (Հնդկաստան), Medtronic Covidien ընկերությունը (ԱՄՆ), Changzhou Haiers Medical Devices Co., Ltd (Չինաստան) և Grena Think Medical (Միացյալ թագավորություն) ընկերությունները:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ բողոքում առկա փաստացի և իրավական հիմքերը չեն համապատասխանում իրականությանը և, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը չեն հակասում օրենսդրության պահանջներին:»:

Պատվիրատուն, 26.04.2022թ.-ին գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության երկրորդ դիրքորոշման վերաբերյալ ներկայացնում են հետևյալը.

1. 18-րդ չափաբաժնի մասով տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև Miconvey (Չինաստան) ընկերության արտադրանքը, որը համատեղելի է Harmonic/Ethicon գեներատորների հետ: Համատեղելիության վերաբերյալ տեղեկատվությունը և տեխնիկական նկարագրությունը հասանելի են հետևյալ հղմամբ (էլեկտրոնային տարբերակը կցվում է).

<https://www.medicalexpo.ru/prod/miconvey/product-298049-1027453.html>

2. 40, 41, 58, 59-րդ չափաբաժինների վերաբերյալ նշենք, որ Innolcon Medical Technology ընկերության կայքում չկա նշում Gen 11 գեներատորների հետա համատեղելիության բացակայության մասին ուստի նման տեղեկությանը մենք չենք տիրապետում:

Նշված չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ինչպես արդեն նշել ենք չեն կիրառվում առանձին, այլ հանդիսանում են արդեն իսկ հոսպիտալներում առկա սարքավորումների կիրառման ժամանակ օգտագործվող ծախսանյութեր, առանց որոնց հնարավոր չի լինի կիրառել այդ վիրաբուժական սարքերը: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում նշված չափաբաժինների համար սահմանված այն պահանջը, համաձայն որի դրանք պետք է համատեղելի լինեն հոսպիտալներում առկա այն սարքավորումների հետ որոնց աշխատանքի ապահովման համար նախատեսված են՝ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ է:

3. Ինչպես արդեն նշել ենք մեր դիրքորոշման մեջ 42, 43, 44, 45, 48, 53, 54, 55, 56 և 57 չափաբաժիններով գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակները ևս առանձին չեն օգտագործվում, հանդիսանում են հոսպիտալներում առկա տարբեր բազմանգամյա

օգտագործման գործիքների միանվագ օգտագործման բաղկացուցիչ մասեր: Ընդ որում 53 և 54 -րդ չափաբաժիններով 3 մասնակցիների կողմից առաջարկվել է 2 տարբեր ընկերությունների կողմից արտադրված ապրանքներ: Այս դեպքում ևս գտնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է դրանց գնումը:

Բողոքաբերի այն պնդումը, որ չի կարելի հիմնվել մասնակիցների առաջարկած տեխնիկական բնութագրերի վրա համարում ենք անընդունելի՝ քանզի հենց դրանց հիման վրա է կատարվում առաջարկների գնահատում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

4. 46, 47, 49, 50-րդ չափաբաժինների մասով բացի մասնակցության հայտով ներկայացված Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքից և մեր կողմից դիրքորոշմամբ որպես համարժեք ներկայացված ապրանքատեսակներից՝ լրացուցիչ ներկայացնում ենք Verykind Medical (Չինաստան) ընկերության կողմից արտադրվող ապրանքատեսակների մասին տեղեկատվությունը: Համաձայն ընկերության կայքում առկա տեղեկատվության այդ ապրանքատեսակները ևս համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին: Ներկայացված տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ (էլեկտրոնային տարբերակը կցվում է).

<http://www.nbverykind.com/en/?prodir=disposable-intraluminal-stapler>

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը չեն հակասում օրենսդրության պահանջներին և, որ «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության պահանջը՝ 18-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարել, անհիմն է:»:

4. ԳԲԲԱ-ԼՕ-2022/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 16.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 1-ից 14, 40-50 և 53-59-րդ չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը՝

Գնման առարկայի			
Ձ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիր	արտադրողի անվանումը
1.	Փաթեթանյութ 75մմx70մ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային՝ «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 75մմ x 70մ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
2.	Փաթեթանյութ 100մմ x70մ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 100մմ x 70մ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
3.	Փաթեթանյութ 150մմ x70մ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, Պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 150մմ x 70մ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
4.	Sterrat 100 S ի կասետներ	Ստերիլիզացնող նյութ պարունակող քարտրիջներ՝ 58%-59,5% ջրածնի պերօքսիդի պարունակությամբ, նախատեսված «Ստերրադ 100S» պլազմային ստերիլիզացիայի համակարգի համար: Կասետը (քարտրիջ) իրենից ներկայացնում է հերմետիկ ձուլված պլաստմասե կաղապար, որը կազմված է ազդող նյութ պարունակող ոչ պակաս, քան 10 միանման բջիջներից, փաթեթավորված է սովորաբար արկղի մեջ և պարունակում է ազդող նյութի հոսքը վերահսկող զգայորոշիչներ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:	
5.	Կենսաբանական զգայորոշիչներ	«Ստերրադ 100S» համակարգում պլազմային մանրէազերծման համար «Sterrat Velocity» կամ համարժեք կենսաբանական զգայորոշիչներ պոլիմերային սրվակով՝ սինթետիկ սպոր պարունակող թեստ-կուլտուրայով, որի մակերեսին առկա է քիմիական զգայորոշիչ, մեկ լրակազմում 2X30 սրվակ կամ համարժեք այլ քանակի, ստերիլ գործարանային փաթեթավորումով:	
6.	Փաթեթանյութ 200մմ x 70մ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 200մմ x 70մ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
7.	Փաթեթանյութ 250մմ x 70մ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող	

		նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 250մմ x 70մմ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
8.	Փաթեթանյութ 350մմ X 70մմ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 350մմ x 70մմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
9.	Փաթեթանյութ 420մմ X 70մմ	Փաթեթանյութի հավաքածու պլազմային «Ստերրադ 100S» համակարգում մանրէազերծման համար, պարունակում է մանրէազերծման ներկցված զգայորոշիչ, որը մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, պահանջվող չափսեր՝ 420մմ x 70մմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
10.	Փաթեթավորող պարկեր 75 X 200մմ HS	Փաթեթավորող պարկեր «Ստերրադ100S» համակարգում մանրէազերծման համար, ներկցված քիմիական զգայորոշիչներով, որոնք մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ: Մանրէազերծված պահպանման ժամկետը ոչ պակաս 12ամիս: Պահանջվող չափսեր՝ 75 x200մմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:	
11.	Փաթեթավորող պարկեր 100 X 260մմ HS	Փաթեթավորող պարկեր «Ստերրադ100S» համակարգում մանրէազերծման համար, ներկցված քիմիական զգայորոշիչներով, որոնք մանրէազերծող նյութի հետ փոխազդելիս փոխում է գույնը անզեն աչքով տեսանելի՝ արտահայտիչ գունային փոփոխությամբ, մանրէազերծված 12ամիս պահպանման ժամկետով: Պահանջվող չափսեր՝ 100 x260մմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
12.	Sterrad 100S-ի բուստերներ	Sterrad 100S սարքավորման համար նախատեսված բուստերներ՝մանրէազերծող նյութի լրացուցիչ քանակով, լուսանցքեր ունեցող պարագաների մանրէազերծման համար: Ստերիլ գործարանային փաթեթավորումով	
13.	Տպող քարտիջ կարող համակարգի համար	Sterrad 100S սարքավորման համար նախատեսված ջերմային կարող համակարգի տպող քարտիջ՝ տվյալները գրանցելու համար, 1 հատ մեկ տուփում, ստերիլ գործարանային փաթեթավորումով	
14.	STERRAD* NX-ի կասետներ	Ստերիլիզացնող նյութ պարունակող քարտիջներ՝ 58%-59,5% ջրածնի պերօքսիդի պարունակությամբ, նախատեսված պլազմային ստերիլիզացիայի «Ստերրադ NX» համակարգի համար: Կասետը (քարտիջ) իրենից ներկայացնում է հերմետիկ ձուլված պլաստմասե կաղապար, որը կազմված է ազդող նյութ պարունակող ոչ պակաս, քան 10 միանման բջիջներից, փաթեթավորված է սովարաթղթե արկղի մեջ և պարունակում է ազդող նյութի հոսքը վերահսկող զգայորոշիչներ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:	
40.	Մկրատ ձեռքի ակտիվացիայով (9 սմ) հյուսվածքների ադապտացիայի համակարգով ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար	Կոագուլյացիոն մկրատ բաց միջամտությունների հյուսվածքներին ադապտացիայի համար նախատեսված համակարգով, ձեռքի ակտիվացիայի հնարավորությամբ: Մկրատը պլաստիկ կորպուսով երկու մկրատաձև բռնակներով՝ ակտիվ և ֆիքսված, նախատեսված են միաժամանակ հատելու և կոագուլյացիայի համար, որոնք ունեն մինչև5մմ տրամագծով անոթներ: Ակտիվացիայի բացակայության դեպքում նրանք կարող են օգտագործվել որպես գրասպեր կամ սեղմակ: Մկրատի տիտանային սայրի տատանման հաճախականությունը երկայանակի ուղղությամբ 55,5 կ<g: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել մինիմալ կամ մաքսիմալ հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրադիրի ստորին մակերեսի վրա հեշտ հասանելիության համար կամ ոտքի առբերման միջոցով:	

		<p>Լրացուցիչ ձայնային ազդանշանը հուշում է ակտիվ բրանշի ջերմաստիճանի բարձրացման մասին, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կառավարել հեմոստագը: Յողունի ընդհանուր երկարությունը 9 սմ հաշված սայրից մինչև ձեռքի կառավարման MAX կոճակը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է, կոնաձև, թեք, որը հնարավորություն է տալիս լավացնել աշխատանքային դաշտի տեսանելիությունը: Ակտիվ բրանշի/սայր/ երկարությունը 16 մմ: Պասիվ բրանշը ունի պլաստիկ վրադիր ակոսիկներով, որը ապահովում է հյուսվածքների հետ արդյունավետ աշխատանքը: Գործիքի ցողունը այլումինից է և նվազեցնում է ծայրադիրի տաքացումը: Բրանշերի առբերման բռնակները սիմետրիկ են օղակաձև: Բրանշերի առբերման բռնակների ներքին մակերեսի և ակտիվացիայի կոճակների վրա առկա ռետինային ծածկույթը կանխում են վիրաբույժի ձեռքի սահելը և նպաստում են ձեռքի հարմար տեղակայմանը: Բռնակների օղակների ամբողջական սեղմման դեպքում առկա տարածությունը ապահովում է կառավարելի կոմպրեսիա չազդելով դիսսեկցիայի վրա: Առկա է ակոսավոր մուտք թեթևացված լապարոսկոպիկ բռնակին միանալու համար: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է ստերիլ, կոմպլեկտավորվում է աշխատանքային մասի կողպեքով և աջակցող ռետինային վրադիրով ծայրադիրը մոնտաժելու համար: Կարող են կիրառվել կարդիոստիմուլատորներով հիվանդների մոտ: Համատեղելի է GEN11 գեներատորների հետ հատուկ հարմոնիկ փոխարկիչի միջոցով: N6 կամ այլ քանակի փաթեթավորմամբ:</p>	
41.	<p>Մկրատ ձեռքի ակտիվացիայով (17 սմ) հյուսվածքների ադապտացիայի համակրգով ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար</p>	<p>Կոագուլյացիոն մկրատ բաց միջամտությունների հյուսվածքներին ադապտացիայի համար նախատեսված համակարգով, ձեռքի ակտիվացիայի հնարավորությամբ: Մկրատը պլաստիկ կորպուսով երկու մկրատաձև բռնակներով՝ ակտիվ և ֆիքսված, նախատեսված են միաժամանակ հատելու և կոագուլյացիայի համար, որոնք ունեն մինչև 5մմ տրամագծով անոթներ: Ակտիվացիայի բացակայության դեպքում նրանք կարող են օգտագործվել որպես գրասպեր կամ սեղմակ: Մկրատի տիտանային սայրի տատանման հաճախականությունը երկայնակի ուղղությամբ 55,5 կՀց: Ծայրադիրը հնարավոր է ակտիվացնել մինիմալ կամ մաքսիմալ հզորության ռեժիմների կոճակների միջոցով, որոնք տեղակայված են ծայրադիրի ստորին մակերեսի վրա հեշտ հասանելիության համար կամ ոտքի առբերման միջոցով: Լրացուցիչ ձայնային ազդանշանը հուշում է ակտիվ բրանշի ջերմաստիճանի բարձրացման մասին, որը լրացուցիչ հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կառավարել հեմոստագը: Յողունի ընդհանուր երկարությունը 17 սմ հաշված սայրից մինչև ձեռքի կառավարման MAX կոճակը: Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ/սայր/ և պասիվ բրանշերից: Ակտիվ բրանշը տիտանային է, կոնաձև, թեք, որը հնարավորություն է տալիս լավացնել աշխատանքային դաշտի տեսանելիությունը: Ակտիվ բրանշի /սայր/ երկարությունը 16 մմ: Պասիվ բրանշը ունի պլաստիկ վրադիր ակոսիկներ, որը ապահովում է հյուսվածքների հետ արդյունավետ աշխատանքը: Գործիքի ցողունը այլումինից է և նվազեցնում է ծայրադիրի տաքացումը: Բրանշերի առբերման բռնակները սիմետրիկ են օղակաձև: Բրանշերի առբերման բռնակների ներքին մակերեսի և ակտիվացիայի կոճակների վրա առկա ռետինային ծածկույթը կանխում են վիրաբույժի ձեռքի սահելը և նպաստում են ձեռքի հարմար տեղակայմանը: Բռնակների օղակների ամբողջական սեղմման դեպքում առկա տարածությունը ապահովում է կառավարելի կոմպրեսիա չազդելով դիսսեկցիայի վրա: Առկա է ակոսավոր մուտք թեթևացված լապարոսկոպիկ բռնակին միանալու համար: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Մատակարարվում է</p>	

		ստերիլ, կոմպլեկտավորվում է աշխատանքային մասի կողպեքով և աջակցող ռետինային վրադիրով ծայրադիրը մոնտաժելու համար: Կարող են կիրառվել կարդիոստիմուլատորներով հիվանդների մոտ: Համատեղելի է GEN11 գեներատորների հետ հատուկ հարմոնիկ փոխարկիչի միջոցով: N6 կամ այլ քանակի փաթեթավորմամբ:	
42.	Փոխվող ծայրադիրներ 30մմ,	Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TX 30 ապարատների համար: Պետք է ունենա հյուսվածքների սահմանափակիչ: Պահունակը լիցքավորված է 11 տիտան-այլումինում-վանադիումի համաձուլվածքից, սեղմակներով, երկու շարքով, շախմատաձև: Սեղմակի լարի տրամագիծը 0, 27 մմ, ամրակի պսակի լայնությունը 4,0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 4, 8 մմ, փակված վիճակում 2, 0 մմ, սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N12 կամ այլ քանակի փաթեթավորմամբ: Նախատեսված TX 30 գործիքի համար	
43.	Փոխվող ծայրադիրներ 60մմ	Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TX 60 ապարատների համար: Պետք է ունենա հյուսվածքների սահմանափակիչ: պահունակը լիցքավորված է 21 տիտան-այլումինում-վանադիումի համաձուլվածքից, սեղմակներով, երկու շարքով, շախմատաձև: Սեղմակի լարի տրամագիծը 0, 27 մմ, ամրակի պսակի լայնությունը 4,0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 4,8 մմ, փակված վիճակում 2,0 մմ, սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N12 կամ այլ քանակի փաթեթավորմամբ: Նախատեսված TX 60 գործիքի համար	
44.	Փոխվող ծայրադիրներ դանակով, 6 շարք, 3D ֆորմատ	Փոփոխվող ծայրադիր միանվագ օգտագործման 55 մմ, նախատեսված NTLC55 գծային կարող կտրող սարքավորման համար, ունի փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորություն: Ծայրադիրը Պարունակում է. ոչ պակաս քան 85 սեղմակ, որոնք դասավորված են երկու եռաշարք շարքերով շախմատային կարգով եվ ունեն հանվող պաշտպանիչ վահանակ: Լարի տրամաչափը ոչ պակաս քան 0,2 մմ, պսակի լայնությունը ոչ ավելի քան 3 մմ, բաց սեղմակի ոտքի բարձրությունը ոչ պակաս քան 4,3 մմ, փակված սեղմակի բարձրությունը ենթակա է կարգավորման, ոչ պակաս քան 1,5 մմ եվ ոչ ավելին քան 2,0 մմ: Սեղմակների նյութը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք է, որը Պարունակում է. վանադիում և այլումինիում Ti3Al2.5V /տիտան 94,5% այլումինիում3% վանադիում 2,5%/ որը նվազեցնում է պլաստիկությունը եվ կանխում սեղմակների հետագա ուղղումը: Ծայրադիրը ապահովում սեղմակային կարի առաջացում որի երկարությունը ոչ պակաս քան 60 մմ, կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 55 մմ բայց ոչ ավելի քան 58 մմ.Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ): Սեղմակները փակվում են եռաչափ սկզբունքով: N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:	
45.	Փոխվող ծայրադիրներ դանակով, 6 շարք, 3D ֆորմատ	Փոփոխվող ծայրադիր միանվագ օգտագործման 75 մմ նախատեսված NTLC75 գծային կարող կտրող սարքավորման համար, ունի փակված սեղմակի բարձրության կարգավորման հնարավորություն: Ծայրադիրը Պարունակում է. ոչ պակաս քան 115 սեղմակ, որոնք դասավորված են երկու եռաշարք շարքերով շախմատային կարգով եվ ունեն հանվող պաշտպանիչ վահանակ: Լարի տրամաչափը ոչ պակաս քան 0,23 մմ, պսակի լայնությունը ոչ ավելի քան 3 մմ, բաց սեղմակի ոտքի բարձրությունը ոչ պակաս քան 4,3 մմ, փակված սեղմակի բարձրությունը ենթակա է կարգավորման, ոչ պակաս քան 1,5 մմ եվ ոչ ավելին քան 2,0 մմ: Սեղմակների նյութը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք է, որը Պարունակում է. վանադիում և այլումինիում Ti3Al2.5V /տիտան 94,5% այլումինիում3% վանադիում 2,5%/ որը նվազեցնում է պլաստիկությունը եվ կանխում սեղմակների հետագա ուղղումը: Ծայրադիրը ապահովում սեղմակային կարի առաջացում որի երկարությունը ոչ պակաս քան 80 մմ, կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 75 մմ բայց ոչ ավելի քան 78	

		մմ.Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությունը ոչ պակաս քան 1,5 սեղմակ (4 մմ) Սայրը գտնվում է երկու եռակի սեղմակների շարքերի միջև, սայրը բաղկացած է բժշկական պողպատից ոչ պակաս քան 400- սերիայի եվ գտնվում է ծայրադիրի մեջ: Ծայրադիրի մեջ գտնվում է կարել/կտրելու մեխանիզմի արգելափակման համակարգ որը գործում է երբ որ ծայրադիրը օգտագործված է լինում: Սեղմակները փակվում են եռաչափ սկզբունքով: Նախատեսված է միանվագ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի օգտահանման: Մատակարարվում է լիցքավորված, ստերիլ ունի հանվող կանխարգելիչ վահանակ որը գտնվում է աշխատանքային մակերեսի վրա: N12 կամ այլ փաթեթավորմամբ տուփ:	
46.	Ֆիրկույար կարող կտրող գործիք 29 մմ	Ֆիրկույար կարող կտրող գործիք 29 մմ: Ունի ցողունով հանվող տափակեցված գլխիկ: Ցողունի վրա առկա է զսպանակային արգելակիչ .կիսետային կապը կապելու ակոսիկ և կտրվող ներդիր: Առկա է կտրված հյուսվածքների տեղակայման համար նախատեսված տեղամաս, ինչպես նաև ներկառուցված տրոակար, որի վրա առկա է լրիվ դուրս բերման մակնշում: Գործիքի վրա առկա է հյուսվածքների սեղման սանդղակ,բացվածքի կարգավորման բռնակ, կարելու բռնակ և կանխարգելիչ: Կոմպլեկտավորվում է լրացուցիչ պլաստիկ տրոակարով հանվող գլխիկի համար և տրոակարի համար նախատեսված պլաստիկ ծածկիչով: Գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում մնում է կալիբրավորված չփոփոխվող տարածություն 1 մմ չափով: Հյուսվածքների սեղմման սանդղակը ունի բրանշերի ճիշտ առբերման դիսպոզիցիոն ոչ պակաս քան 7 մմ, ինչպես նաև մարկերային երիզներ: Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռետինապատ չսահող մակերես: Աշխատանքային մասի տրամագիծը 27- 29 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը ոչ պակաս քան 20,4 մմ, թեք ցողունի երկարությունը 18 սմ: Առկա է գործիքի արագ բացման և փակման մեխանիզմ և կարելու ծայնային և տակտիլ վերահսկողության մեխանիզմ: Գործիքը լիցքավորված է ոչ ավել քան 24 սեղմակներով տեղակայված շախմատածև և շրջանածև երկու շարքով: Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից Ti6Al 4V /90%տիտան 6% ալյումին 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործելու համար, մատակարարվում է ստերիլ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:	
47.	Ֆիրկույար կտր կտրող-կարող ապպարատ, 33մմ	Ֆիրկույար կարող կտրող գործիք 33 մմ: Ունի ցողունով հանվող տափակեցված գլխիկ: Ցողունի վրա առկա է զսպանակային արգելակիչ .կիսետային կապը կապելու ակոսիկ և կտրվող ներդիր: Առկա է կտրված հյուսվածքների տեղակայման համար նախատեսված տեղամաս, ինչպես նաև ներկառուցված տրոակար որի վրա առկա է լրիվ դուրս բերման մակնշում: Գործիքի վրա առկա է հյուսվածքների սեղման սանդղակ, բացվածքի կարգավորման բռնակ, կարելու բռնակ և կանխարգելիչ: Կոմպլեկտավորվում է լրացուցիչ պլաստիկ տրոակարով հանվող գլխիկի համար և տրոակարի համար նախատեսված պլաստիկ ծածկիչով: Գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում մնում է կալիբրավորված չփոփոխվող տարածություն 1 մմ չափով: Հյուսվածքների սեղմման սանդղակը ունի բրանշերի ճիշտ առբերման դիսպոզիցիոն ոչ պակաս քան 7 մմ, ինչպես նաև մարկերային երիզներ: Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռետինապատ չսահող մակերես: Աշխատանքային մասի տրամագիծը 31- 33 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը ոչ պակաս քան 24,4 մմ, թեք ցողունի երկարությունը 18 սմ: Առկա է գործիքի արագ բացման և փակման մեխանիզմ և կարելու ծայնային և տակտիլ վերահսկողության մեխանիզմ: Գործիքը լիցքավորված է ոչ ավել քան 28 սեղմակներով տեղակայված շախմատածև և	

		<p>շրջանաձև երկու շարքով: Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից/90%տիտան 6% ալյումին 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործելու համար մատակարարվում է ստերիլ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	
48.	Փոխվող ծայրադիրներ TLC 75 կարող-կտրող գործիքի համար	<p>Մեկ անգամյա օգտագործման պահունակներ TLC 75 ապարատի համար, նորմալ հյուվածքների համար: Պահունակը պետք է ունենա սայրի համար նախատեսված ուղի, կոճակներ, հյուսվածքները ֆիկսելու համար, քարթրիջի սխալ տեղադրման կամ օգտագործված քարթրիջի տեղադրման դեպքում ներկառուցված սայրի արգելակաման մեխանիզմ: Պահունակը, պարունակում է 76 տիտան-ալյումինում-վանադիումի համաձուլվածքից Ti3Al2.5V /տիտան 94,5% ալյումինիում3% վանադիում 2,5%/ սեղմակներ, տեղադրված շախմատաձև երկու շարքով, պահունակը պետք է ունենա կանխարգելիչ շերթ: Սեղմակի լարի տրամագիծը 0, 2 մմ, ամրակի պսակի լայնությունը 3, 0 մմ, բաց սեղմակի ոտիկի երկարությունը 3,85 մմ, փակված վիճակում 1,5 մմ: Պահունակը ապահովում է 77 մմ կար . Կարի երկարությունը երկար է կտրվածքի երկարությունից 4 մմ, սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N12 կամ այլ համարժեք քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով:</p>	
49.	Ապարատ ցիրկուլյար, կարող-կտրող Լոնգոյի մեթոդով հեմոռիդոպեքսիայի համար	<p>Ապարատ ցիրկուլյար, կարող-կտրող Լոնգոյի մեթոդով հեմոռիդոպեքսիայի համար, որը իր հետ ունի կեռիկ, լայնիչ և անոսկոպ: Հավաքածու նախատեսված ցիրկուլյար ռեզեկցիայի և լայն ցիրկուլյար լորձա-ենթալորձային բերանակցման տեղակայման համար: Այն կիրառվում է Լոնգո-ի մեթոդով հեմոռիդոպեքսիայի համար: Բաղկացած է ցիրկուլյար կարող գործիքից, թելը բռնելու համար նախատեսված կեռիկից, թափանցիկ անալ լայնիչից, որը հնարավորություն է տալիս տեսանելի դարձնել ատամնավոր գիծը և առկա է հնարավորություն մաշկի վրա ֆիքսելու: Անոսկոպ տեսելության 90աստիճանով կիսետային կար տեղադրելու համար: Ցիրկուլյար կարող կտրող գործիքը ունի չհեռացվող գլխիկ, խորը հատված ռեզեկցված հյուսվածքների համար, թելի կողմնային ակոսիկներ որոնք նախատեսված են ռեզեկցվող հյուսվածքների ինվազիոնացիայի հսկողության համար, գլխիկային մասի վրա սանտիմետրային սանդղակ, մեկ բռնակ կարելու համար և գործիքի վաղաժամ ակտիվացիան կանխող արգելափակիչ: Գլխիկը ամբողջական սեղմակները փակվելու համար նախատեսված ակոսիկներով: Գործիքի աշխատանքային մասի տրամագիծը 31- 33 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը – 24,4մմ: Առկա է մեխանիզմ գործիքի արագ բացման և փակման, երբ բրանշերի միջև տարածությունը ավել է քան 12 մմ, առկա է մեխանիզմ որը հնարավորություն է տալիս ձայնային և տակտիլ վերահսկել կարելու պրոցեսը, հյուսվածքների սեղմման սանդղակ որը միաժամանակ կարգավորում է սեղմակների փակման բարձրությունը: Բրանշերի միջև առկա է կարգավորված չփոփոխվող տարածություն, որը կանխում է հյուսվածքների լրացուցիչ ճզմումը գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում: Լիցքավորված է 28 սեղմակներով, սեղմակների տրամագիծը 0,28 մմ, պսակի լայնությունը 4 մմ, բաց ոտիկի բարձրությունը 4 մմ, փակ ոտիկի բարձրությունը 0,75 – 1,5 մմ: Սեղմակների բաղադրությունը ՄՌՏ համատեղելի համաձուլվածք Ti90Al6.4V /տիտան 90,0% ալյումինիում6% վանադիում 4,0%/որը հնարավորություն է տալիս նվազեցնել պլաստիկությունը և կանխել սեղմակների հետադարձ բացումը: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ախտահանման: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:</p>	
50.	Ցիրկուլյար կարող կտրող գործիք 25 մմ	<p>Ունի ցողունով հանվող տափակեցված գլխիկ: Ցողունի վրա առկա է զսպանակային արգելակիչ .կիսետային կապր կապելու</p>	

		<p>ակոսիկ և կտրվող ներդիր: Առկա է կտրված հյուսվածքների տեղակայման համար նախատեսված տեղամաս, ինչպես նաև ներկառուցված տրոակար, որի վրա առկա է լրիվ դուրս բերման մակնշում: Գործիքի վրա առկա է հյուսվածքների սեղման սանդղակ, բացվածքի կարգավորման բռնակ, կարելու բռնակ և կանխարգելիչ: Կոմպլեկտավորվում է լրացուցիչ պլաստիկ տրոակարով՝ հանվող գլխիկի համար և տրոակարի համար նախատեսված պլաստիկ ծածկիչով: Գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում մնում է կայիքավորված չփոփոխվող տարածություն 1 մմ չափով: Հյուսվածքների սեղման սանդղակը ունի բրանշերի ճիշտ առբերման դիապագոն ոչ պակաս քան 7 մմ, ինչպես նաև մարկերային երիզներ: Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռետինապատ չսահող մակերես: Աշխատանքային մասի տրամագիծը 23- 25 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը ոչ պակաս քան 16,4 մմ, թեք ցողունի երկարությունը 18 սմ առկա է գործիքի արագ բացման և փակման մեխանիզմ և կարելու ձայնային և տակտիլ վերահսկողության մեխանիզմ: Գործիքը լիցքավորված է ոչ ավել քան 20 սեղմակներով տեղակայված շախմատածև և շրջանածև երկու շարքով: Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից /90%տիտան, 6% այլումին, 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործելու համար մատակարարվում է ստերիլ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:</p>	
53.	Տիտանային ամրակներ (միջին-մեծ)	<p>Տիտանային համաձուլվածքից ամրակներ միջին-մեծ, դիստալ փակման ձևով, 2, 5 – 4 մմ անոթների համար Բացած վիճակում 5,5 մմ, փակած վիճակում 8,7 մմ Պետք է ունենա երկարությամբ ձգվող և զուգահեռ ակոսիներ ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Համատեղելի լինեն Էթիկոն ֆիրմայի միջին-մեծ չափի կլիպսերի տեղադրման գործիքների հետ: Արտաքին մակերեսին պետք է ունենա ակոսիներ՝ համապատասխանող ամրակների սեղմակներին, սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N108 կամ այլ համարժեք քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	
54.	Տիտանային ամրակներ (մեծ)	<p>Տիտանային համաձուլվածքից ամրակներ մեծ, դիստալ փակման ձևով, 5,5 – 7,5 մմ անոթների համար Բացած վիճակում 8 մմ, փակած վիճակում 12 մմ: Պետք է ունենա երկարությամբ ձգվող և զուգահեռ ակոսիներ ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Համատեղելի լինեն Էթիկոն ֆիրմայի մեծ չափի կլիպսերի տեղադրման գործիքների հետ: Արտաքին մակերեսին պետք է ունենա ակոսիներ համապատասխանող ամրակների սեղմակներին սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N108 այլ համարժեք քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	
55.	Փոփոխվող քարթրիջներ սեղմակներով (1,8 մմ) «Էշելոն» 45 գործիքի համար	<p>Փոփոխվող քարթրիջներ Էթիկոն ֆիրմայի «Էշելոն» 45 գծային կարող կտրող գործիքի համար, միանվագ, հաստացած հյուսվածքներ կարելու համար: Սեղմակային կարի փակ սեղմակի բարձրությունը 1,8 մմ: Երկու եռաշար սեղմակների միջև առկա է ակոս սայրի համար: Ներկառուցված մեխանիզմ որը արգելափակում է սայրը օգտագործված քարթրիջ տեղադրելու դեպքում: Քարթրիջը Պարունակում է. 70 սեղմակ տիտանային համաձուլվածքից, որոնք տեղակայված են երկու եռաշարքով շախմատածև: Բաց սեղմակի ոտիկի բարձրությունը 3,8մմ, սեղմակային կարի երկարությունը մոտավորապես 45 մմ: Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությանը առնվազն 1,5 սեղմակ կախված հյուսվածքի հաստությունից: Մատակարարվում է լիցքավորված և ստերիլ: Աշխատանքային մակերեսի վրա առկա է պաշտպանիչ վահանակ որը կանխում է սեղմակների տեղաշարժը տեղափոխման կամ տեղադրման ժամանակ: Սեղմակների հումքը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք Ti3Al2.5V /տիտան 94,5% այլումինիում3% վանադիում 2,5%/ որը ապահովում է</p>	

		<p>պլաստիկության նվազում և կանխում է սեղմակների հակադարձ բացումը: Ունենա գունային մակնշում, մատակարարվում են ստերիլ նախատեսված են միանվագ օգտագործման համար: N12 կամ այլ քանակի ստերիլ գործարանային փաթեթավորումով</p>	
56.	<p>Փոփոխվող սեղմակներով (1,5 մմ) «Էշելոն» 45 գործիքի համար</p>	<p>Փոփոխվող քարթիջներ Էշելոն ֆիրմայի «Էշելոն» 45 գծային կարող կտրող գործիքի համար, միանվագ, նորմալ հաստության հյուսվածքներ կարելու համար: Սեղմակային կարի փակ սեղմակի բարձրությունը 1,5 մմ: Երկու եռաշար սեղմակների միջև առկա է ակոս սայրի համար: Ունի սայրը արգելափակող ներկառուցված մեխանիզմ, որը կանխում է սայրի առաջխաղացումը օգտագործված քարտիջի կամ նոր քարտիջի սխալ տեղադրման դեպքում՝ հնարավոր արյունահոսությունը և հյուսվածքների վնասումը: Քարթիջի բարձրացված գրպանիկները ապահովում են մեխանիկական կարի նույնանման և հավասարաչափ ձևավորումը՝ նվազագույնի հասցնելով հյուսվածքների հնարավոր վնասումը: Քարթիջը Պարունակում է. 70 սեղմակ տիտանային համաձուլվածքից, որոնք տեղակայված են երկու եռաշարքով շախմատաձև: Բաց սեղմակի ոտիկի բարձրությունը 3,5 մմ, սեղմակային կարի երկարությունը մոտավորապես 45 մմ: Մեխանիկական կարի երկարությունը գերազանցում է կտրվածքի երկարությանը առնվազն 1,5 սեղմակ կախված հյուսվածքի հաստությունից: Մատակարարվում է լիցքավորված և ստերիլ: Աշխատանքային մակերեսի վրա առկա է պաշտպանիչ վահանակ որը կանխում է սեղմակների տեղաշարժը տեղափոխման կամ տեղադրման ժամանակ: Սեղմակների հումքը ՄՌՏ համատեղելի տիտանային համաձուլվածք Ti3Al2.5V /տիտան 94,5% այլումինիում 3% վանադիում 2,5%/ որը ապահովում է պլաստիկության նվազում և կանխում է սեղմակների հակադարձ բացումը: Պետք է ունենա գունային մակնշում, մատակարարվում է ստերիլ նախատեսված է միանվագ օգտագործման համար: Տուփում 12 հատ կամ այլ համարժեք քանակի գործարանային տրանսպորտային փաթեթավորմամբ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:</p>	
57.	<p>Փոխարինվող կասետներ «Էշելոն» 60 գործիքի համար 2,0մմ և 1,5մմ</p>	<p>Քարթիջ փոխարինվող, սեղմակներով միանվագ օգտագործման որոնք նախատեսված են Էշելոն ֆիրմայի «Էշելոն» 60 գծային կարող կտրող գործիքի համար, նորմալ կամ հաստ հյուսվածքները կարելու նպատակով, ձևավորում է սեղմակային կար: Ունի սայրը արգելափակող ներկառուցված մեխանիզմ, որը կանխում է սայրի առաջխաղացումը օգտագործված քարտիջի կամ նոր քարտիջի սխալ տեղադրման դեպքում՝ հնարավոր արյունահոսությունը և հյուսվածքների վնասումը: Քարթիջի բարձրացված գրպանիկները ապահովում են մեխանիկական կարի նույնանման և հավասարաչափ ձևավորումը՝ նվազագույնի հասցնելով հյուսվածքների հնարավոր վնասումը: Քարթիջը Պարունակում է. 88 հատ տիտանային համաձուլվածքից /90% տիտան 6% այլումին 4% վանադիում/ սեղմակներ, դասավորված շախմատաձև, երկու եռաշարքով: Քարթիջը հնարավորություն է տալիս սեղմակային կարի տեղադրում, որի երկարությունը կազմում է 60 մմ: Մեխանիկական կարը գերազանցում է կտրվածքի երկարությունը 1,5 սեղմակով: Յուրաքնչյուր եռաշարք կարի դիստալ շարքը պարունակում երկուական սեղմակ:</p> <p>Մատակարարվում է լիցքավորված, ստերիլ, շարժական գունավորված պաշտպանիչ վահանակով որը տեղակայված է քարթիջի աշխատանքային մակերեսի վրա: 12 հատ յուրաքնչյուր փաթեթում: Գունային մակնշում: Մատակարարվող քարտիջների ընդհանուր քանակի 50%-ը պարունակում է սեղմակներ, որոնց բարձրությունը բաց վիճակում 3,5 մմ է, իսկ փակ վիճակում (սեղմակային կարի դեպքում) 1,5 մմ: Իսկ մյուս 50%-ը պարունակում է սեղմակներ, որոնց բարձրությունը բաց վիճակում 4,1 մմ է, իսկ փակ վիճակում (սեղմակային կարի դեպքում) 2,0 մմ:</p>	

58.	Բռնակ ձեռքի ակտիվացման համար, նախատեսված «HARMONIC» և «GEN11» գեներատորի համար	«HARMONIC» և «GEN11» գեներատորի համար նախատեսված լայարուստային բռնակ HP054 կամ համաժեք, որը ուլտրաձայնային գեներատորի էլեկտրական իմպուլսները վերափոխում է ծայրադիրի ակտիվ սայրի մեխանիկական երկայնական տատանումների 50-100 մկմ դիապազոնում 55,5 կՀց հաճախականությամբ: Բաղկացած է մետաղական բռնակից և միացնող լարից, որը վերջանում է կտրվածքով կցորդիչով, որը իր վրա ունի ճիշտ միացման համար նախատեսված մակնշում: Նախատեսված է 95 ակտիվացիայի համար, առկա է ներկառուցված հաշվիչ: Բռնակին միացված ծայրադիրները /թե 5 և թե 10մմ տրամագծով/ հնարավոր է ձեռքով ակտիվացնել մաքսիմալ և մինիմալ /հնարավոր է կարգավորել/ հզորության ռեժիմներով, ինչպես նաև ոտքի սեղմակների միջոցով: Նախատեսված է բազմանվագ օգտագործման համար, հնարավոր է օգտահանում ավտոկլավացման միջոցով մինչև 120oC ջերմաստիճանի պայմաններում: Մատակարարվում է ոչ ստերիլ վիճակում ունի հերմետիզացիայի համար կափարիչ որը օգտագործվում է նախաստերիլիզացիոն մշակման ժամանակ միացման մեխանիզմը պաշտպանելու համար: Տրամադրվում է առնվազն 9 ամսվա երաշխիքային կտրոն: Գործարանային փաթեթավորում:	
59.	Ձեռքի բռնակ թեթևացված, նախատեսված «HARMONIC» և «GEN11» գեներատորի համար	Բռնակ թեթևացված ձեռքի պլեզոէլեկտրական էլեմենտներով: Նախատեսված է ուլտրաձայնային վիրաբուժական գեներատորի էլեկտրական իմպուլսները բարձր հաճախականության մեխանիկական տատանումների /55,5 կՀց / վերածման համար: Այդ տատանումները փոխանցվում են ծայրադիրների սայրին, որոնք էլ իրենց հերթին տատանվում են երկայնակի ուղղությամբ: Բաղկացած է բռնակից, որի վրա առկա է ակոսավոր ելուն, որի միջոցով էլ միանում է ծայրադիրներին և ճկուն մեկուսացված լարից, որը վերջանում է ռետինապատ խրոցով, որով միանում է գեներատորի առաջային մակերեսին գտնվող բունոցին: Խրոցի վրա առկա է գունային մակնշում, որը հնարավորություն է տալիս արագ և ճիշտ միացնել բռնակը գեներատորին: Ներկառուցված է հաշվիչ՝ ակտիվացիաների քանակը հաշվելու համար /100 ակտիվացիա/: Պետք է հնարավոր լինի ակտիվացնել ծայրադիրը, հենց ծայրադիրի վրա տեղակայված ձեռքային տրիգերի, ինչպես նաև ոտքի սեղմակի միջոցով: Պետք է ունենա բռնակի վիճակի թեսթավորման ֆունկցիա: Թերության արտաձում գեներատորի դիսպլեյի վրա: Անհատական ձայնային ինդիկացիա բռնակի անսարքության, բռնակի և գեներատորի, բռնակի և ծայրադիրի սխալ միացման դեպքում: Մատակարարվում է կանխարգելիչ պլաստիկ գլխիկով, որը կանխում է ակոսավոր ելունի վնասումը: Մատակարարվում է ոչ ստերիլ: Առկա է մեկ ստուգողական ծայրադիր, որը նախատեսված է բռնակի ադեկվատ աշխատանքի թեսթավորման համար: Տրամադրվում է առնվազն 9 ամսվա երաշխիքային կտրոն: Գործարանային փաթեթավորում:	

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ձարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան

հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 16.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով սահմանվել է ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագիրը և արտադրողի անվանում՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար անհատապես:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով

բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Ձարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով և

գնահատելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմաններն ու բողոքարկման կողմերի կողմից ներկայացված ապացույցները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմանների մասով թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրն կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա պայմանները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով կազմված տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման՝ նշված դրույթներին:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից, գնման ընթացակարգի 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով, բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը՝ 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով, պետք է հայտարարել չկայացած:

Ինչ վերաբերում է «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված՝ գնման ընթացակարգի հրավերի տեքստը ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու արդյունքում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով գնանշման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելու մասին սկզբնական բողոքով ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներին և պահանջին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, գնման ընթացակարգը հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով, գործել է ոչ իրավաչափ, քանի որ քարտուղարը գնման ընթացակարգի հրավերի տեքստը՝ նաև ռուսերեն լեզվով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով պետք է հրապարակեր տեղեկագրում, սակայն հրապարակել է միայն հայերեն լեզվով, որի պարագայում կարող է առաջանալ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթների խախտում, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտում, այն է՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման

գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Սակայն, վերը նշված իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով Պատվիրատուի և Ընկերության ներկայացրած լրացուցիչ դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում առկա չէ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտում, հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ռուսերեն լեզվով հրավերի չհրապարակելու հանգամանքը պետք է ուղակիորեն առաջացնի մասնակցության իրավունքի սահմանափակում կամ անհավասար պայմաններ ստեղծի գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնող մասնակիցների համար: Այդ դեպքում է միայն հնարավոր փաստել, որ առկա է Օրենքի վերոնշյալ դրույթներով սահմանված սկզբունքների խախտում: Ընդ որում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ռուսերեն լեզվով հրավերի չհրապարակելու հանգամանքով պայմանավորված բողոք ներկայացնելը չպետք է լինի ինքնանպատակ ու ցանկացած դեպքում (առանց որոշակի խոչընդոտման հանգամանքի առկայության կամ մրցակցության սահմանափակման) հիմք հանդիսանա ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից բողոքներ են ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված մի շարք բժշկական նշանակություն ունեցող ապրանքատեսակների գնման ընթացակարգերի դեմ. Մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/15», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/17», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/18», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/19», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր), որոնց չափաբաժինների թիվը կազմում է ընդհանուր առմամբ 360 և ավելի:

Ընկերության կողմից ներկայացված վերոնշյալ բողոքների իրավական ու փաստական հանգամանքները վերաբերում են այդ թվում հրավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու արդյունքում վերջինիս մասնակցության իրավունքի

սահմանափակմանը, իսկ պահանջը նույնն է՝ ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելն է:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն գործով՝ հավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու փաստի վերաբերյալ Ընկերության կողմից չեն ներկայացվել այնպիսի վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեին վերջինների սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստի կամ խախտման առաջացման վտանգի առկայությունը, Ընթացակարգերի շրջանակներում (360 չափաբաժիններ) ներկայացված բողոքների առումով իրենց իրավական պաշտպանության իրական (ռեալ) լինելու փաստը: Հետևաբար Ընկերության կողմից ներկայացված բողոքով առկա՝ հավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու փաստական հանգամանքները վերացական են և ելնում են հավասար մրցակցության սահմանափակման հնարավոր, ենթադրյալ տեսլականից՝ չպարունակելով որոշակի և իրական (ռեալ) փաստական տվյալներ:

Ավելին, Բողոքներ քննող անձը, Օրենքի 50-րդ հոդվածի դրույթների հաշվառմամբ, հարկ է համարում նաև հավելել, որ գնումների գործընթացի բողոքարկումը չպետք է լինի ինքնանպատակ և գնումների գործընթացի անհարկի հետաձգման պատճառ հանդիսանա: Պետական գնումների անհրաժեշտությունը պայմանավորված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների պատշաճ իրականացման հրամայականով, և այդ գործընթացների անհարկի հետաձգումները կարող են արհեստական խոչընդոտներ ստեղծել նշված մարմինների ամենօրյա գործունեության համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով՝ հրավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու վերաբերյալ բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն այս իրավական ու փաստական հանգամանքների մասով անհիմն են և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/50 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը՝ 1-ից 14-րդ, 40-ից 50-րդ և 53-ից 59-րդ չափաբաժինների մասով, հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ